

Կը հրատարակուի ամեն շաբաթ օր

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Ղ. ԲՈԼՍ

Կը բովանդակէ երկրագործական, պարտիզպանական, արհեստական, առտնին տնտեսական, գիտական, դրական, իրաւաբանական, առողջապահական և այլ ամենակարեւոր յօդուածներ և Յ. Հաճեան էֆէնտիի զուարճալիքներ:

Կը պատասխանէ բաժանորդաց այն անկէն հարցումներուն, որոնք թերթին պարունակութենէն դուրս չեն:

Հանրագիտակի բաժանորդագրինն է, եռամսեայ 13, վեցամսեայ 25, տարեկան 50 դրշ. արտասահման 15 ֆրանք:

Ամեն անոնք՝ որոնք ունեն անկաւարտ հետըմ չեն ուղեր բաժանորդագրուիլ, բայց կ'ուզեն ստանալ «Հանրագիտակը», պէտք է գիմեն Պոլիս Մարդարեան գրատան որ պատրաստ է հասցնել իրենց տնիքան թիւ «Հանրագիտակ» որքան չըւշ որ զրկուի իրեն:

«Հանրագիտակ» մինչեւ 15^{րդ} թիւը արդէն հրատարակուած լինելուն, ցարդ չի վճարողներէ կը խնդրուի իրենց ստացած «Հանրագիտակ» գինն անյապաղ զրկել Մարդարեան գրատունը, Կ. Պոլիս, Մէրճան փողոց, թիւ 57:

ՁԲՕՍԱՆՔ

Լուծում քիւ 6 Հանելուկի

Պատ—ճառ

Ձոր լուծեցին Տեարք, 1. Յ. Շէէֆեան. — 2. Յ. Արայճեան. — 3. Գեղամ Ն. Ծիւ վանեան. — 4. Պողոս Բ.:

*
*

Այլոց նման չարածճի չեմ,
Ոչ ալ քօղի տակ ծածկուած եմ.
Հոգի չունիմ, բայց ամեն տեղ եմ.
Գոյութիւն ունիմ, բայց նիւթ ալ չեմ:

Գաւաթ մ'օղի թէ գինի խմես,
Առանց խորհելու դու զիս յիշես,
Թէ չի ճանչցար զիս այս ըսածէս,
Մտիկ ըրէ սովբեցնեմ քեզ:

Ձորս վանկով բառ մ'եմ յոյժ բաղձալի,
Երեք վանկս զատ զատ գտնուի.
Անձնիչխան ի մէջ Այբուբենի,
Բաղաձայն են միշտ ըստ կանոնի:

Հաշուով ալ դու գիտնաս թէ ջանաս,
Երբ ըսեմ անոնց գումարըն աստ.
Որ հաւատա՛, հինգ հարիւրէն գտնաս,
Երեսուն եւ վեց թիւ միշտ պակաս:

Վերջինս ունի երեք իմաստ,
Մին ծակի ի բաղնաց միութեանց,
Միւսն մասնիկ մ'է գոյականաց,
Իսկ երրորդը մահ տայ կենդանեաց:

Բ.

Այս Հանելուկը առաջին անգամ լուծողը թող գիմէ Մարդարեան Գրատունը, ուր պիտի ստանայ աղտորիկ նուէր մը, պայմանաւ սակայն որ բաժանորդ ըլլայ:

ԴՊՐԱՊԵՏԱՅ ԱԶԻՂ ԼՈՅՍ

Թէ առաւօտեան Սրբազան երգեցողութիւնք և թէ ի դէմս Ս. Պատարագի երգեցողութիւնք հրատարակուած են, փոքրիկ դպիրներու համար: Գինը 20 փարա կը գանուի Վ. Յ. Մարդարեան գրատունը, Մերճան փողոց թիւ 57:

Գրական եւ Գիտական

Encyclopedie

مجموعه علوم

Բ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 15

1898 ՅՈՒՆԻՍ 13

ԿՈՒԼՊԵՆԿԵԱՆ ԵՒ ԱՆԱՆՕՑ

ԸՆՏԱՆԵԱՅ ՇԲԵՂ ՀԱՐՍՆԻԲԸ

Յունիս 11 ի Հինգշաբթի օրն, բերկրոտիթ օր մ'էր ոչ միայն Կիւլպէնկեան եւ Անանօֆ Գերգաստանայ, այլ եւ նոյն բարեհամբաւ Տանց բարեկամայ եւ համակրողայ համար:

Երկու ազնուատոհմ գերգաստաններ աւելի ամուր կապերով նոյն օր կը միանային եւ Եկեղեցին կ'օրհնէր իր զաւակայ այս Սուրբ միութիւնն:

Ս. Երրորդութեան Տաճարն լուսադարձեալ, եւ յաւակալէս հրաւրելոյ համար գեաղինը ծանրագին քորգերով ծածկուած էր. իսկ բեմի լուռ ձգուած էր մեծաքսեայ ծանրագին դորդ մը, որ առաջնորդուեցան նազելափայլ Օր. Մարկինա Ս. Անանօֆ, եւ առաջնակարգ վաճառական Գառնիկ Էֆ. Կիւլպէնկեան եւ կիւքահայրն Ազն. Վահան Էֆ. Ս. Կիւլպէնկեան: Երկու փորթիկ եւ սիրուն աղջիկներ՝ Սրբուհի Պատրիկ Կիւլպէնկեան եւ Նարինքա Ս. Անանօֆ, բեհեղեղայ շրջագդեաներով պահազարդեալ հար-

սընդորի գերը կը կատարէին: Իսկ երկու սիրասուն պատանիներ Պ. Սերովբէ Պ. Կիւլպէնկեան եւ Պ. Յովհաննէս Անանօֆ, Փետին եւ Հարսին Հիմնական շահերը բռնած էին:

Քահանային դասը՝ շուրջառեալ, եկեղեցւոյ առեանը ելնելով, Հալաւի արարողութիւնը կը կատարէր, ներդաշնակ երգեցողութեամբ խումբ մը ընտրեալ երաժշտապետայ:

Հալաւի օրհնութենէն վերջ, հանդէսին նախագահ Ս. Պատրիարք Հայրն զգեստաւորեալ, եւ Տ. Մելքիսեդեկ ու Տ. Հմայեակ Եպիսկոպոսներն կիսազգեստ՝ բեմին վրայ ելան եւ մասնակցեցան Ս. Պատրիարքի խորհրդին:

Խաչակիր Տ. Յովհաննէս Ա. Քհնյ. Մկրեան փորձարար եւ շուրջառ առած Զեռնուութիւնը կատարեց:

Իսկ Սանտալճեան Տ. Կարապետ Քհնյ. իրրեւ տաներէց, Հարսին ու Փետին գրէթին վրայ Պատրիարքի նաքսար կապեց:

Սրբազան Պատրիարքը Պատրիարքի աղօթքը կարդայ եւ այս առթիւ պերճախօս քարոզ մը տալով, բացատրեց ամուսնական Ս. Խորհուրդը եւ շնորհաւորեց նորա-

պոսակ Ամուները եւ Կիւլպէնկեան եւ Անանօֆեան դերդաստանի Անդամները:

Թագվերացի Աւետարանը կարգաց Տ. Հմայեակ Սր. Դիմաքսեան, իսկ Թագվերացի աղօթքը եւ Դինուոյ օրհնութիւններու Տ. Մեքիսեդեկ Արքեպիսկոպոսը:

Աւելորդ է ըսել թէ՛ ընտրեւագոյն րազմութիւն մը ազնուական դասէն գլխաւորած էր եկեղեցին, ուր կը տեսնուէին Դեսպանական անձնաւորութիւններ, հայտնի եւ օտարազգի ծանօթ պաշտօնատարներ, վաճառականներ, եւայլն, եւայլն:

Պոսակի արարողութիւնը լրանալէ վերջ՝ Հարսն ու Փեսան եւ բոլոր հանդիսականք, ու եկեղեցական դասը, կարգաւ առաջնորդուեցան Սպանտիտի պանդոկը որ այս առթիւ իր ճոխ զարդարանքները կրկնապատկած էր. շաւերով, գորգերով եւ ծաղիկներով: Մտից գուռը կը ծածկէր ոսկեթել թանկագին գորգ մը: Ընդունելութեան սրահը ամբողջ հալաւայիտ ծաղիկներով պճնուած էր: Եւ յատուկ փառահեղ տեղ մը նորապսակ Ամուներն ընդունեցին հանդիսականաց շնորհաւորութիւնները:

Հարսին նուիրուած ագամանդներն, թանկագին զարդերն, ծանրագին գորգերն եւ ծաղկեփունջերն, եւայլն, յատուկ սենեկի մէջ ի տես գրուած կ'սպասէին հանդիսականաց այցելութեան:

Ընդունելութեան սրահին դիմացի սենեակն Ս. Պատրիարք Հօր եւ կղերական դասուն համար չքեղապէս զարդարուած էր: Ընտիր նուագածուաց խումբ մը ընդունելութեան միջոցին գեղեցիկ կտորներ կը զարնէր:

Թող աթլեան Մկրտիչ էֆէնտի ալ իրեն յատուկ մասնագիտութեամբ եւ ճաշագիտութեամբ ճոխ չքասեղան մը կանդնած էր, որ իրեք ժամ շարունակ անդադրում կը հրամայէր հանդիսականաց

զանազան քաղցրաւենիներ, օշարակներ, ըմպելիներ եւ պաղպաղակներ, եւայլն:

Այս միջոցիս այլեւայլ կողմերէ շնորհաւորական հեռագիրներ եւ զանազան նամակներ կը տեղային, որոնք նորապսակներուն կենացը համար եղած բարեմաղթութեանց շարունակութիւններն էին:

Հրաւիրելոց ընդունելութենէն յետոյ Կիւլպէնկեանց Տաներէց Արթ. Տ. Կարապետ աւագ Քհյ. Սանտալճեան եւ Քիպարիան Տ. Վռամշապուհ Քհյ. Նորապսակները ու Հարսնեւորները առաջնորդեցին 30ի չափ հանդիսական լանտօներով ի կամուրջ, ուրկէ յատկապէս վարձուած Շիրքէթի Խայրիէի 39 թիւ շոգենաւով Մեծ Կղզի գացին, Հարսանեաց Տան մէջ՝ Ազնուափայլ Փեսին Մօրը ներկայութեանը Թագաւորութեան արարողութիւնը կատարելու:

Հանրագիտակ այս առթիւ իր սրտագին շնորհաւորութիւններուն հետ բարերաստիկ օրեր կը մաղթէ նորապսակ Ամուներուն, որոնք կուգան զոյգ մ'եւս աւելցնել Ազգիս Ազնուազարմ գերդաստաններու վրայ, եւ վառ պահել յաւէտ իրենց տոհմային յատկանիշը եղող հանրօգուտ ձեռնաուորութիւնները:

Մեծ. Պօղաճեան Տիգրան էֆէնտի, յետ այսու պիտի առաջարկէ թուաբանական խնդիրներ, առաջին լուծողին պիտի տրուի Շրէքերի Առողջարանական մարմնամարզութիւն մը:

Խնդիր Ա. մէկ շաբթուան մէջ երեք Հինգշաբթի. Խնչպէս կարելի է այս:

ԽԵԼԱՅԻ ԿԻՆԸ ԻՒՐ ԱՄՈՒՍԻՆՆ
ԱԼ ԽԵԼԱՅԻ ԿԸՆԷ

Ժամանակ մը Ս. քաղաքին մէջ կը ընա-
կէր Մանչօթ ահուհալ աղբաւոր մը.
այս մարդը խելացի և մանաւանդ զեղե-
ցիկ գերի մը ունէր. ոչ ոքն այնքան սի-
րահարեցաւ որ վերջապէս ամուսնացաւ
անոր հետ: Կինը Նեքինա (ասոր) կը
կոչուէր, աշխատասէր եւ տնարար էր,
միշտ շարժման մէջ. ինքն իսկ զեղեցի-
կներով իւր ծառաները եւ զերինները, եւ
ոչ ումէք պէտք ունենալով տանը ոչ-
խառութեանց համար, նոյն իսկ ինք իւր
ձեռքերով կ'եփէր իւր ամուսնոյն համեղ
կերակուրները: Բայց ինչպէս ամեն կի-
ներ այս մասնաւոր յատկութիւնները
չունին, նա անհուն փափաք մը ունէր,
միշտ իւր ամուսնոյն զգացընել տալ իւր
այս ժողովածոյատկութիւնները, կըրկ-
նելով միշտ բանաձեւ մը ամեն մէկ խօ-
սակցութեան մէջ, երբ մանաւանդ ա-
մուսինը գնահատէր իւր եփած մէկ հա-
մեղ կերակուրը կամ իւր ըրած գեղե-
ցիկ մէկ գործը, որ իրեն մեծ հաճոյք պատ-
ճառած էր, Խեղացի կինը իւր ամուսինն
ալ խեղացի կ'ընէ. կ'ըսէր այն ատեն Նե-
քինա, եւ այնքան շատ՝ որ ալ ամուսինը
սկսու ձանձրանալ:

Անտարակոյտ ըստ. օր մը ամուսինը,
խիստ գոհ եմք ի հետ ամուսնացած
ըլլալու համար, դուն իմ տանս մէջ
կարգ ու կանոն գրիր. բոլոր անտարա-
կոյս կըներես ինչ մտածել տալ որ, դուր-
սի առեւտրական գործերուս յաջողու-
թիւնը բնաւ քեզի չեմ պարտիր, եւ ե-
թէ անոնք աղէկ կ'երթան, քու ունե-
ցած գեղեցիկ յատկութիւններուդ հա-
մար չէ:

— Ի՞նչ, ի՞նչ կ'ըսէք ըստ Նեքինա.
եթէ ձեր գործերը լաւ կ'երթան, պատ-

ճառը այն է որ՝ դուք զանոնք լաւ կը
կառավարէք. բայց պիտի կրնայի՞ք զա-
նոնք լաւ վարել, եթէ տուն վերադարձ-
ցած միջոցնուդ տեսնէիք ձեր կինը իւր
արդուշարդով զբաղած, ձեր սպասա-
ւորները ծուլօրէն ասդին անդին փռու-
ուած, եւ կամ ձեր կերակուրը չափա-
զանց շատ կամ քիչ եփած: Վեղացի
կ'ընէ իւր ամուսինն ալ խեղացի կ'ը-
նէ...:

— Եւ ահա ճիշտ այդ բանին համար
է որ զգացած եմ երկրորդ կին մ'ալ
առնել...:

— Անոր համար որ աւելցուց կինը,
իմ այս գեղեցիկ յատկութիւններս ու-
նեցող ուրիշ կին մը գտած չէք...:

— Կամ քեզի համար ունեցած ճշմա-
րիտ սիրոյն Նեքինա:

— Կամ իմ ունեցած արժանիքիս հա-
մար Մանչօթ:

— Այդպէ՞ս կը կարծէք...:

— Եւ առանց ինծի ձեր տունը փճա-
ցած պիտի ըլլար, ընդմիջեց Նեքինա.
այո՛, անտարակոյտ, ոչ միայն կը հա-
ւատամ, այլ եւ ապահով եմ... Վեղա-
ցի կինը իւր ամուսինն ալ խեղացի կ'ը-
նէ...:

— Նեքինա՛, ըստ Մանչօթ ընդմիջե-
լով զայն, կ'արդիւեմ ձեզ անդամ մը եւս
այս խօսքը արտասանելէ. որովհետեւ
զիս կը նեղայնէք առտուընէ մինչեւ ի-
րեկուն...:

— Պատճառը այն է որ, ըստ կինը,
կը փափաքէի զձեզ համոզուած տեսնել
այդ մասին:

— Դուք պէտք էք ձեր գործերով
զիս համոզել, եւ ոչ ձեր խօսքերով:

— Ներեցէք, տէ՛ր, դիտել տալ ձեզ
որ, ըստ կինը, իմ գործերս հաւասար
են խօսքերուս, ո՛ւր պիտի գտնէք ինծի
պէս աշխատասէր, ժիր, մարբասէր, օւ-
րինապահ, ամենէն կանուխ արթնցող և

ամենէն ուշ պառկող...

— Ծիշդ է, ճիշդ է, ըսաւ Մանչօթ, սեղանն նստելով, որուն վրայ ճաշը պատրաստ էր:

— Ո՞ւր պիտի դռնէք, ըսաւ Նեքինա, ամուսնոյն հաւանութենէն քաջալերուած, կին մը որ ձեր փափարին համաձայն կերակուրները կը պատրաստէ, և որ աւելի լաւագոյն կերպերը դիտէ սեղան պատրաստելուն:

— Այդ ալ ճիշդ է, այդ ալ ճիշդ է, կրկնեց ամուսինը որ զբաղած էր տեսակ տեսած քիչալիներ ուտելով զանոնք շատ կը սիրէր, և որոնք այնքան համեղ և ընտիր կերպով կը պատրաստուէին կրնանք ձեռքով:

— Հաշուադէտ էինն է որ, լաւ կերպով կը ծախսէ:

— Իրաւունք մը, որ չեմ կրնար ուրանալ, ըսաւ ամուսինը:

— Խոստովանեցէք նաեւ որ, որքա՞ն լաւ կը խնամեմ ձեզ երբ հիւանդ ըլլաք. և իմ միակ ջանքս կըլլայ ձեզի հաճելի ըլլալ:

— Խոստովանեցէք դուք ալ նաեւ որ, ըսաւ Մանչօթ կնիւնը դառնալով, բնաւ բան մը խնայած չեմ ձենէ, և որ ձեզի համար ամենէն քաղցր և գորովազեղ ամուսինը եղած եմ:

— Ինչ որ չձեզ կը համոզէ թէ, ըսաւ կինը յանդգնութեամբ «Խեղացի կինը իւր ամուսինն ալ խեղացի կ'ընէ»:

— Կերպնում որ, պոռաց ամուսինը բոլորովին բարկացած, Աստուծոյ համբերութիւնն իսկ հատուցած պիտի ըլլայիք. և ահաւասիկ վերջին անգամ ըլլալով կ'ըսեմ, եթէ անգամ մ'ալ այդ խօսքը կրկնէք, թողում պիտի ձեզ, և ծախսեմ պիտի ուրիշ մարդու մը:

Այդ խօսքերը ըսելով, Մանչօթ ձգեց սեղանը և մեկնեցաւ:

Այս տեսարանէն քանի մը օր վերջ,

Նեքինա իւր ամուսնոյն հետ՝ երբ պատուհանին առջեւ նստած էին, հրապարակին վրայ մարդ մը տեսան որ պատրաստած հագուստներ հագած, ու կըռնակն ալ փայտերու խուրձ մը առած կ'երթար:

— Կը տեսնէք այս մարդը, ըսաւ Մանչօթ, Ժամանակաւ հարուստ վաճառական մ'էր, իսկ այսօր փայտ կը կրէ:

— Օ՛հ, ըսաւ կինը, զիտեմ թէ ի՞նչ է պատճառը:

— Ի՞նչ է արդեօք:

— Հաւանականաբար չար և դէշ կին մը ունեցած ըլլալու է:

— Զէ՛, բնաւ չեմ կարծեր որ այդ եղած ըլլայ փճացած ըլլալուն պատճառը:

— Խեղացի կինը իւր ամուսինն ալ խեղացի կ'ընէ, պատասխանեց կինը:

— Դուք խեղդ և յամուռ արարած մըն էք, պոռաց Մանչօթ կատաղութեամբ բորբոքած, իւր կնոջ այս խօսքին համար, որ միշտ կը կրկնէր. և քանի որ սեւէ բան չէ կորսող չձեզ ետ կեցնել այդ դէշ սովորութենէն, ահաւասիկ խօսքս պիտի կատարեմ:

Ու պատուհանէն դուրս կախուելով կանչեց փայտավաճառը, որ անմիջապէս սրահը եկաւ, երբ դեռ Նեքինա իւր ամուսնոյն անակնկալ բորբոքումէն չէր կըրցած սթափիլ:

— Այս կինը իմ գերիս է, ըսաւ Մանչօթ՝ փայտավաճառին, կ'ուզե՞ս զայն գրնել:

— Բայց ես խիստ ազբատ եմ, և հետեւաբար կին մը գնելու վիճակին մէջ չեմ:

— Զայն ձեզի պիտի տամ, և անոր հետ ալ երեք հարիւր դրուշ, ըսաւ Մանչօթ, այնքան բարկացած՝ որ ականջ իսկ չէր կախեր Նեքինայի հեծկլտալներուն և հառաչներուն. պայմանաւ սակայն որ այս քաղաքը պիտի թողուք և բնաւ չի

պիտի դառնաք:

— Այս պայմանաւ կ'առնեմ ձեր կի-
նը, ըսաւ փայտավաճառը գիտեցով նե-
քինաւ հասակի գեղեցկութիւնը և դէմ-
քին հրապոյրները:

Եւ անմիջապէս դործադրեց Մանջօթ.
կանչել տուաւ քաղաքապետը, որ շուտ
մը եկաւ. նեքինա գերի մը ըլլալով,
իւր տէրը իրաւունք ունէր զայն ծախել,
ձգելէն վերջը: Բայն մը զոր չի պիտի
կրնար ընել ազատ կնոջ մը հետ. ժամ
մը վերջը՝ նեքինա լալով, և բոլորովին
յուսահատ, իւր նոր ամուսնոյն հետ քա-
ղաքէն հեռացաւ, ինչպէս որ խոստա-
ցած էր:

(Շարունակելի)

Թարգմ. Գաղիեհեհե

ԱԼԻՔ

ՎԱՐԴԻ ԹՈՒՓԵՐ

(Աւանդակ)

Ա.

Արծուի բոյնի պէս, ցից զառիվեր լե-
ռան մը կողին, գիւղը կը բարձրանայ, չըր-
ջապատուելով թեւ թեւի տուած լեռնաշղ-
թաներէ:

Այդ բարձրութենէն՝ ուր գիւղը թառած
է, երբ վար կը նայիս, նայուածքը լեռան
գոգաւորումներուն կէս շուք խորութիւննե-
րուն մէջ կը մտնի, կամ աւելի հեռուն քիւ-
հաճ բարձրութիւններէ կտրտուած հորիզոնի
մը հեռաւորութիւնը կը չափէ կը չափչփէ:
Հորիզոնը լայն է ու մինչեւ հոն երկարող
դաշտերուն համայնապատկերը ընդարձակ է՝
այնչափ որչափ գիւղացի մանչ մը գաղա-
փար ունի աշխարհի ընդարձակութեանը վը-
րայ:

Բ.

Գարունը կուգայ ու իր ծով կանանչով կը
լեցնէ ձորերը:

Այ մարդ մարդաստանք չկայ գիւղին մէջ:
Դիւղացիները, դուռ դրացին ամէն ալ դաշ-
տերն են, Լայն ու ամայի փողոցին մէջ ծի-

ծեռնակը անվախ գետնէն կը սուրայ, վերը
աղբերու կոյտին քով ալ հաւերու զուարթ
ընտանիք մը հանդարտ կը կթկթայ. քչիկ
մը անդին դամբաւ մը մեղկօրէն կ'երկնայ
արեւին տակ:

Հիւղակներու փուշ ցանկապատները խո-
տերու մէջ խեղդուած են. ու աղու կանանչ-
ներու մէջէն կ'երեւան տանիքները, որոնց
ծածկին տակ գիւղական խաղաղ կեանքը
կը սահի. պարզ՝ ինչպէս սա շրջապատող
լեռները. ու բնական՝ ինչպէս մացառներուն
մէջ մեծցող ճնճղուկներուն կեանքը:

Ինչ սիրուն է գիւղին կեանքը, ուր աշ-
խարհիկ հոգերու կապարի ծանրութիւնը չի
ճնշեր մարդուն սիրտը, ուր ժամերը կը սա-
հին փետուրի մը թռիչքին չափ թեթեւ
հանդարտ ու անհոգ:

Գ.

Ամէն իրիկուն, երբ գեղջուկ հովիւները
լեռներէն ու դաշտերէն տուն կը դառնան,
գիւղը երկարող ճամբուն վրայ անհոգ եր-
գերու, դառան բոժոժներու ձգձգուող աղ-
մուկ մը կենդանութիւն կուտայ լեռներուն,
ու արձագանքը հառաչանքի պէս կ'երկարի,
հեռուն, անծանօթ պուրակներու մէջ մարմ-
րելով:

Երիտասարդ հովիւ մը մինակ ուշ տուն կը
դառնայ, ու անհամբեր նայուածքը դրացի-
նին բազեղներով ոստայնանկուած պատու-
հանին կը սեւեւէ: Ամէն իրիկուն ինչո՞ւ
այս խուզարկու նայուածքը: Ո՞վ կը վնտը-
ռէ արդեօք այդ երիտասարդը:

... հոն, այդ հիւղին մէջ կը բնակի իր
սիրածը, որուն սեւ սեւ, ծիծեռնակին թեւ-
ւին չափ սեւ մագի խուրձերը սիրտը գրա-
ւած են, եւ կրակոտ աչքերը իր մէջ լուրնկ-
ցուցած են սիրոյ կրակը: Լեռներուն ու ան-
ցուցած են մարդուն մէջ, ուր մարդու ոտք
ծանօթ անտառներուն մէջ, ուր մարդու ոտք
դալած չէ թերեւս, եւ ուր փայտահատին
կացինին ձայնը մինակ արձագանք տուած
է, մտածող շուքերու տակ կը ծլին անանկ
ծաղիկներ որոնց գեղեցկութեան վրայ քաղ-
քեցիները գաղափար չունին թերեւս:

Հովիւին դրացուհին այդ անծանօթ տե-
ղերու անծանօթ գեղեցկութեանը կը նմանի,
իր թխորակ դէմքով ու հովուուհիի ճկունու-
թիւններով: Այդ լեռներու աղջիկը իր սի-
րով պիտի երջանկացնէ այն երիտասարդը

մինակ, որ ամենէն ուժովն է գիւղին մէջ, ամենէն սրտոտը. եւ արհամարհող շեշտ նայուածքով կը նայի վարապին աչքին:

Ու աղջիկը սիրած է իր դրացի երկտասարդ հովիւը:

Դ.

Ձորին մէջ, հսկայ ծառերու իրարու երկընցող ճիւղերէն կազմուած կանանչ կամարին տակէն գետակը հանդարտ կը սահի. այնչափ հանդարտ որ կարծես կը քնանայ ծառերու շինած շուքին տակ: Ձուրին մէջ կախուող խոտերը՝ սրբ վտակին եզերքը ծածկող կանանչ թաւիչին շարունակութիւնն են, վերէն ալ ծառի ճիւղերով ծաղկեցկարուած երկնակապոյտին ցոլացիկ պատկերը կ'անդրադառնան վտակին մէջ, եւ տարբեր աղւոր աշխարհի մը բեկբեկ պատկերը կը շինեն հոն: Արեւն ալ տերեւներու մէջէն արծաթ կը ցանէ այդ ջինջ ջուրերու ծփուն ծալքերուն վրայ:

Այդ ձորին մէջ, գետեզրը, հովին ու իր սիրունին ընկողմանած են:

Գաղտնապահ պուրակներու ու անտառներու մէջ կատարուած սիրոյ խոստովանանքը՝ ոստոնաող տերեւներու թեթեւ երաժշտութիւնով մը վրդովուած, գիւղացի նշանաներու կեանքին ամենէն սիրուն ու ամենէն անուշ վարկեաններն են:

Հովիւը, զինքը տակնուվրայ ընող զգացումին բովանդակ թափովը, իր սիրունիին հաճելի եղող եղանակը կը նուագէ արինգի վրայ. արեւելքի երաժշտութեան ամենէն մեղամաղձիկներէն մէկը — ոչխարներուն ջուր խմցունելու եղանակը — որ անդգալաբար ախեր կը խլէ մտիկ ընողէն, սա ընկողմանող հովուհիին աչքերուն պէս:

Ու երիտասարդը զինով, չուրջը պոռթկացող բնութեան գեղեցկութիւններէն, զինովցած աղջկան կախարդիչ նայուածքէն, իր բոլոր ճիւղը կը թափէ արինգը լեզու հանելու համար. վարկեան մըն ալ վար կը դնէ գոյն ու իր տաք համբոյրներով կը լեցունէ այն չորագույն փոսերը, զոր ժպիտը կը շինէ աղջկան լեցուն ոյտերուն վրայ:

Մտածած ունի՞ք ընտել գիւղացի նշանաներու վրայ:

Ե.

Բայց գիւղին մէջ սովորութիւն չէ որ տը-

ղայ մը ծնողքին չհաւնած աղջիկը առնէ:

Հովիւին մայրը, չուքը ծանր ջատուկ մը, ներկայացուցիչն է այն պառաւնեքուն, որոնց մէկ ոտքը գերեզմանին մէջն է, բայց, կատուի պէս, եօթը հոգի ունին ու գիւրաւ չեն ազատիր հարսերը իրենց կեսուրի աղի բեռէն:

Այդ պառաւը ցեղական ատելութիւն ունի հարսնացուն դէմ. ատոր համար, ջուրին ընթացքը խափանող ժայռին պէս, արգելք կը լայ մանչուն ամուսնութեանը:

Եւ ի՞նչ տղան եթէ հիմա մոմ ըլլայ ու վառի, նորէն չի պիտի կրնայ իր մայրը համուգել:

Ի՞նչ ընելու է ուրեմն:

Ձ.

... վարը լեռան ստորոտը ցցուող ապառաժին չափ կարծր է մօրը սիրտը, ու բնաւ չի գիշանիք երիտասարդին աղաչանքներուն: Մուկները կը մարին, երբ կը խորհի թէ մանչուն նշանաւորով ցուցանք պիտի ըլլայ գիւղին մէջ. ու այդ բանը կրակէ չափիկ, երկաթ կոշիկ հագնիլ ըսել է իրեն համար:

Ամէն անգամ նորէն երբ հովիւը կ'աղաչէ, մօրը կ'անակին եփ ջուր կը թափեն կարծես: Չէ՛, բնաւ թող չի պիտի տայ որ տղան իր ուղածին հետ ամուսնանայ: Անէծքը բնէծքը պիտի ելլէ մինչեւ անգամ: Եւ մօրը անէծքը առնողին վերջը լաւ չ'ըլլար. հետի ըլլայ, կ'ըսեն թէ, եղբաշխարքին լեզուն վիզէն դուրս կը քաշեն:

Հովիւը կը մտածէ թէ՛ այդ ջատուկին յամուսնութեան չափաւր յողթէ, ու մանաւանդ ամէն օր արիւնհոտ պիտի ելլէ տունը. կը վճռէ ոսկի կախարչով ծածկել ընտանեկան այս վէճերը:

Է.

Այս լեռներուն մէջ ուր ամէն բան խոշոր է եւ ուժով, մարդուն կամքն ալ պողպատի ամրութիւնը ունի: Գիւղացին իր թքածը չի լվեր:

Իրիկունն է: Արեւմուտքէն բղխող զոյնբու ծաւալուն հրդեհ մը կը դողդղայ արեւմուտքի սարերուն վրայ, ու թեթեւ կարմիր մը կը վազէ լեռներու կանանչ կողերն ի վար: Վերջապէս այս լայն ոսկեգոծումի պառնուն, մշակները տուն կը դառնան կամաց կամաց:

Այդ իրիկուան դաշտէն դարձողները, ճամբուն վրայ մացառին երկնցող ստուերներուն տակ գտան երկու սիրահարներուն դիակները:

Հովիւը մտքին դրածը կատարած էր:

Բայց ուրիշին երջանկութիւնը աւրողը անպատիժ չի մնար: Մեռնող աղջկան եղբայրը վրէժխնդիր կ'ըլլայ, ու այն ատեն՝ երբ ամբողջ գիւղը վեր ոտք ելած, այս դէպքին պատճառով հոն հաւաքուած է. պառաւը արդէն իր արժանաւոր պատիժը կրած էր:

Բ.

Տարիներ կ'անցնին, ու այդ դիակներուն ինկած տեղը դէմ դէմի վարդի թուփեր կը բուսնին: Հիմա, երբ մայիսը կուգայ այդ վարդի թուփերը կը բողբոջին, կը կանչընան. ու կոկոնները բացուելու ատենը ճիւղերը իրարու կը ջանան փաթթուիլ. բայց պառաւ կեսուրին թափած արիւնին տեղէն դժնէ փուշեր կը բարձրանան, ու երկու վարդերը իրարմէ կը բաժնեն:

Անկից անցնողը ճիւղի պարտք կը սեպէ այդ փշերը կտրել. բայց վարդերու ճիւղերը դեռ իրար չփաթթուած, մէկ գիշերուան մէջ, ջատուկներու յատուկ եղող յամառութիւնով փշերը նորէն կը բարձրանան թոյլ չտալու համար որ սիրահար ծաղիկները փրար գրկեն:

Մալկաւա

Մ. Ռ.

ԱՆԱՍՆԱՐՈՒԺԱԿԱՆ

ԿԵՂԱՏԵՆԴ

(Fièvre aphteuse. Ըայ խաւարալիը)

(Պատահական քիւ 33 հարցման)

Կեղատու տենդը տարափոխիկ հիւանդութիւն մ'է, որ կը վարակէ արջառները (գաւաւ սղողը), եւ որոնցմէ կրնայ փոխանցիլ ոչխարներուն եւ խոզերուն:

Արջառները երբ վարակուին այս հիւանդութենէն, նախ տիբութիւն մը կուգայ վրանին, յետոյ սարսուռներ եւ տենդ: Գըլլանին կը կախեն, տրուած ուտելիքները կը մերժեն. եւ 1—2 օր վերջը ընդհանրապէս պզտիկ այտուցներ (սիւլիկոնի) կ'սկսին

երեւիլ անոնց բերնին մէջ, լեզուին վրայ, չրթուքներուն եւ ծիծերուն վրայ, կճղակներուն (թոնալ առաւը) մէջտեղուանքը, որոնք պատուելով կ'ընդարձակուին, եւ խոցի երեւոյթով վէրքեր յառաջ կը բերեն:

Երբեմն կը պատահի որ, այս այտուցները մարմնոյն ամեն կողմը մէկէն յառաջ կուգան. բայց ընդհանրապէս վարակումը մէկ կամ 2 մասերուն վրայ կ'ըլլայ նախ, եւ ապա կը տարածուի:

Վարակումը երբ բերնին մէջ է, առատ լորձնահոսութիւն (սալեսա) մը յառաջ կուգայ, կենդանին կուզէ ուտել. բայց չի կրնար, տրուած ուտելիքը կը ծամծմէ, եւ առանց կլելու բերնէն դուրս կը ձգէ: Լին տերը այս միջոցին ամբողջ խոցերով ծածկուած է. եւ երբեմն լեզուին վրայի բարակ մաշկը (սէրիկ) ամբողջովին դատուելով կ'իյնայ: Կեղատենդը իր այս վիճակին մէջ ամենէն աւելի ահուկին կ'երեւայ իր սկզբնաւորութեան մէջ թէեւ, բայց միւս տեսակներէն նուազ վտանգաւոր է եւ շուտ կը բժշկուի:

Երբ վարակումը ծիծերուն վրայ սկսի, կիթեւա գործողութիւնը կը դժուարանայ պտկուքներուն վրայ ելած վէրքերուն պատճառաւ. կովը վերջին ծայր դիւրախտիլ (կրտսիլանը) կ'ըլլայ, կաթը ամբողջովին չի կիթուելով ծիծերը կ'ուռին, ուրկէ յառաջ կուգայ սալարներ, եւ շուտ անգամ ալ մէկ կամ երկու պտկուքները կ'աւրուին (ծակիւրը գոցուելով, այլեւս կաթ չեն տար):

Կեղատենդի ամենէն աւելի վտանգաւոր վարակումը ոտքերուն վրայ է: Նախ կենդանին կը կաղայ (թոխալլանալ), յետոյ կճղակներուն մէջտեղը վէրքեր կը գոյտնան, կը տարածուին հետզհետէ, եւ կճղակներուն մէջի կողմէն եղունգները կը զատուին, յետոյ ներքոնին (սալակ) կողմէն. կոճերը (թոխոյ) կ'ուռին, սկիւրները կը փոխին:

Եթէ վարակումը 4 ոտքերուն վրայ մէկէն սկսի, կենդանին չի կրնար ոտքի վրայ կենալ եւ գետինը կը տարածուի. այն ատեն, ազդրին (գալլա), լանջքին (կեոյիւս), արմուկներուն ծունկերուն վրայ սալարներ յառաջ կուգան, որով կենդանին տառապանքը աւելնալով ընդհանրապէս կը մեռնի:

Գարմանում. — Որովհետեւ կեղատենդը ամեն կենդանիի վրայ միեւնոյն սպառնալու

Թեամբ եւ միեւնոյն ձեւով չ'երեւիր, մինչեւ իսկ միեւնոյն տխուրին մէջ. անոր համար պէտք է ամեն կենդանիին հիւանդու թեան տատիճանին եւ ձեւին համեմատ զատ զատ դարման ընել:

Ներսէն տալու է իրենց խմելու ջուրին հետ խառն նատրոնի ծծմբատ (իւնիլիզ քաղը) 250 կուամ. կամ նատրոնի երկրնածխատ (պիլ գառպոնաք սը սոս) 50 կուամ. այս երկու աղերը կրնաք փոխարինել տալ, այսինքն՝ օր մը մէկը, օր մը միւսը, մինչեւ որ հիւանդութեան սաստկութիւնը նուազի. եւ կամ իրենց խմելու ջուրին մէջ խառնեցէք ամեն օր 100ին 1 հաշուով (10 օխա ջուրին 40 տիրէմ) փենտական թթու (սախս փենիֆ), եւ 200 կուամ նատրոնի ծծմբատ:

Օրը երկու անգամ լուացէք քթին ծակերը եւ բորբոսիքը ինչպէս եւ բերնին մէջը 1% ուռտական թթուով (սախս սալիսիլիֆ), այսինքն 1 օխա ջուրին մէջ 4 տրամ ասիտ սալիսիլիֆի հաշուով:

Կրնաք նոյնպէս գործածել տաք ջուրի մէջ լուծուած ոսկերորակային թթու (սախս պոնիֆ), կամ հետեւեալ բաղադրութիւններէն մին.

1. Ոսկերորակային թթու	50 կուամ
Ոսկերորակ (պոնախ, քենիֆեար)	5 »
Թորեալ ջուր (իւնպիկե ֆաշուած)	500 »
2. Ուռտական թթու	2 »
Ոսկերորակային թթու	12 »
Ջուր	1000 »

Ամեն օր ոտքի վերքերը լուացէք հետեւեալ բաղադրութիւններով.

3. Պղնձի ծծմբատ (կիօզ քաշը)	5 կուամ
Աղէկ քաջախ	20 »
Ջուր	100 »

Յետոյ քսեցէք վերքերուն վրայ հետագայ սպեղանին.

4. Մեղր	280 կուամ
Քաջախ	140 »
Ժանգառ (ճենկեար)	100 »

Իրար խառնեցէք, մաղմաղ կրակի վրայ շուրջացուցէք, մինչեւ որ մեղրի թանձրութեան հասնի:

Եթէ եղունգները զատուած են, զգուշութեամբ քսուած մասը սուր դանակով մը կամ աւելի աղէկ ածելով մը կտրեցէք հա-

նեցէք, եւ այն տեղը քսեցէք վերի սպեղանին խառնելով խաշխառն (գաթրան), եւ բեւեկին խէժի (քիրէմեկի) հետ:

Ահաւասիկ ուրիշ բաղադրութիւն մ'ալ, որ ազդու եւ տեան ըլլալով հանդերձ, ամեն մարդ կրնայ դիւրութեամբ պատրաստել:

5. Առէք գինիի մեծ կակ տակաւ մը, մէջը դրէք 10 - 15 քիւզ հին գինիոյ կտորուանք, լեցուցէք վրան 150 քիւզի չափ ջուր, աւելցուցէք յետոյ կամաց կամաց լեցնելով, 3-4 քիւզ ջրաքլորային թթու (քաղ րուհու). խաշխառն եռացում (գայնամա) մը առաջ կուգայ, երբ տեսնէք թէ չափազանց եռալով, փերփուրը տակաւին բերնէն դուրս պիտի թափի, այն ատեն քիչ մը սաղ ջուր լեցուցէք, որ խառնուրդը պղծեցնելով հանդարտի: Երբ եռացումը ամբողջովին լրանայ եւ դիրտը տակը խնայ, այն ատեն ուրիշ տակաւի մը մէջ քաշեցէք եւ պահեցէք: Բայց որովհետեւ միշտ տակաւին տակը չի լուծուած զինկօ կը մնայ. կրնաք նոյն գործողութիւնը վերսկսիլ, այս անգամ քիչ ջուր եւ քիչ թթու գնելով:

Այս լուծուածքը պէտք է գործածել փոփոխակի թիւ 3ին հետ, այսինքն օր մը մին օր մը միւսը. եւ կամ եթէ վարակումը սաստիկ է, առաւօտուն մէկ լուծուածքը, երեկոյին միւսը. եւ մ'իմ անգամուն ալ թիւ 4 սպեղանիով օծել:

Ստինքներու պտկունքները պէտք է դարմանել հետեւեալ բաղադրութիւնով.

6. Ոսկերորակային թթու	1 կամ 2 կուամ
Եռացող ջուր (առանց սպեղեց-	
նելու	100 »
Իւղաշիճ (կիլսեռիկ)	15 »

Իրար խառնեցէք եւ պղնձին վերջը գործածեցէք. եւ կամ պարզապէս ոսկերորակային նաթթածարպով (վազըլին պոնիֆե):

Յաճախ բայց զգուշութեամբ կիթելու է ծիծերը, որպէս զի կաթը մէջը մնալով բորբոսում յառաջ չի գայ: Երբ տեսնէք թէ վարակումը սաստիկ եղած է, եւ կիթելը անկարելի, այն ատեն, մանաւորապէս պատրաստուած արծաթէ բարակ եւ նեղ խողովակներ կան, զոր պտկունքներու ծակերէն ներս մտցնելով, կաթը կը հոսեցնեն: Այս պարագային, եթէ յատկապէս արծաթէ պատրաստուած խողովակիկներէն չի գտնաք,

կրնաք դործածել նաեւ փետուրի ծայրերը, որոնց նեղ կողմը կը կտրէք քիչ մը, միայն ծակը բացուելու համար. կը մաքրէք, կը հակաճիւնէք ոսկերորակային (աւիս պօռիֆ) լուծուածքի մէջ՝ — 2—3 % համեմատութեամբ պատրաստուած —, եւ յետոյ ուշով կանցնէք ծակերէն ներս. բայց վերջին ծայր ուշադրութիւն պէտք է որ, փետուրներուն ծայրերը սուր մնալով ծիծերը չի փնասեն:

Հիւանդութիւնը երբ թեթեւ կերպով ներկայանայ, միայն պարզ դեղերով ալ կրնաք առաջը առնել. ինչպէս՝ կողմի (նեշէ) կեղեւի խաշութիւն քուրը, պողպղ, եւայլն:

Ախտը պէտք է վերջին ծայր մաքուր պահել, ամեն օր աղբերը վերցնելու է: Կենսական վիճակը ստեղծելու երբէք ցեխի կամ գոմէզի (աղբի ջուրը, շերպէք) կամ մէզի մէջ մնալու չեն: Շարունակ անոնց առջեւ դրէք մաքուր եւ պաղ ջուր: Ամեն անգամ որ վերայիշեալ դեղերով պիտի դարմանէք, նախ ոտքերը պաղ եւ մաքուր ջրով լուացէք, մէջը դնելով քիչ մը աւիս պօռիֆ:

Ուշադրութիւն ըրէք որ, կենդանիները շատ չի նիհարնան. այն ատեն միայն ուտելիք մի տաք, երբ իրենք, ակորժակ չ'ունենալով մերժեն: Ուտելիքները չոր ըլլալու չին եւ ոչ ալ դժուարամարս: Այս պարագային կրնաք տալ եթէ ամսա է, կանաչ խոտ: Յարգ եւ չոր խոտ մի տաք: Թեփով ջուր, ինչպէս եւ ալիւրով ջուր (գարիի վարսակի եւ հաճարի) օգտակար կրնան ըլլալ: Ձմեռը կըրնաք տալ ճակնդեղ, սոսիսի, գետնախնձոր, ամենն ալ եփելով եւ ամթերայի (շախա) վերածուած: Աղը այս հիւանդութեան մէջ օգտակար է, ուստի քիչ շատ ուտելիքներուն հետ խառնելու է:

Հորթը երբէք զիւցնելու չէ. այլ կաթը կթելով եփելու եւ վեր ի վերոյ 32—35 աստիճանի պաղեցնելով խմցնելու է: Ասոնց ախտը միշտ մաքուր պահելու է. ամեն օր հակաճիւնելու է փետական թթուի լուծուածքով, կամ թիւ 5 բաղադրութիւնով: Հորթերը երբ վարակուին կեղտոնեղէ, իսկոյն կը մեռնին. երբէք չեն կրնար զիմադրել հիւանդութեան:

Հիւանդութեան փոխանցումին առաջը առնելու համար կը յանձնարարուի.

1. Շրջականները կեղտոնեղ եղած ատեն,

երբէք օտար կենդանիներ դեղէն կամ ագարակէն ներս չ'առնել:

2. Երբէք դրացի գիւղերը կամ ագարակները չի յաճախել, որովհետեւ կրնաք ձեր կօշիկներով կամ զգեստներով հիւանդութեան մանրէները ձեր ակոսները բերել:

3. Օտար անձեր, մասվաճառ, անասնաբու, քանաք, այդ պարագաներու մէջ արգիւցէք ձեր ագարակը մանելու, որոնք թեւեւ հիւանդութեանց վայրերը յաճախած ըլլալով, կրնան մանրէներու փոխադրութեան միջոցներ ըլլալ:

4. Վերջապէս ըստ կարելոյն ջանալու է հակաճիւնէք դեղերով շարունակ հիւանդութեան առաջը առնել:

5. Վերջ յիշուած դեղերը եթէ անասնաբույժի մը միջնորդութեամբ որոշել տաք, աւելի աղէկ կ'ըլլայ, որ վարակուած կենդանիին տարիքին, կազմակերպութեան եւ հիւանդութեան աստիճանին համեմատ կրնայ տնօրինել. իսկ երբ անասնաբույժ մը չի գտնուի, այն ատեն կարի գործը թեմամբ կը վարուիք. եւ մօտակայ դեղագործի մը կամ բժիշկի մը խորհուրդները կ'առնէք. որոնք անշուշտ ձեզմէ աղէկ կրնան հասկնալ դեղերու մատակարարումը: Հակառակ պարագային, վերը յանձնարարուած միջոցները կը դործադրէք: Հիւանդութիւնը որ այդ միջոցներով 20—25 օրէն կրնայ անցնիլ, պէտք է այնուհետեւ 2 չարաթի չափ եւս դարմանումը շարունակել, հետզհետէ դեղերու չափը նուազեցնելով, եւ 2—3 օրը անգամ մը ընելով:

6. Վարակուած կովերուն կաթը մարդոց անդեան գործածելու համար, պէտք է առաջաց աղէկ մը եռացնել:

Լ. ԲՈԼՍ

Թերթը տպագրութեան արուած ատեն, Յարգոյ Անասնաբույժ մը կեղտոնեղ տի դարմանման մօտին մեզ զրկած էր դրութիւն մը, որու մէջ օգտակար մասեր գտնելով, կը ներկայացնեմք Պատ. Հնթերցողաց:

..... Մինչեւ որ այտուցները երեւան չի դառն, անասունին տենդը չ'անհետանար: Այտուցները իրենց երեւալէն 34 ժամ վերջը կը բացուին, վէրքի կը փոխուին եւ հետըզ-

հետէ կը թարախանան, ծիծերու պակուհե-
ներուն վրայ թեփի պէս կեղեւ մը կը կազ-
մուի: Ութերորդ կամ 10^{րդ} օրը վէրքերը
կ'սպիտանան, անասունին ախորժակը կը բաց-
ուի եւ կ'սկսի սրածալ:

Հիւանդութիւնը 15-18 օր կը տեւէ, բայց
երբեմն եւ մասնաւորապէս ախտներու մէջ
կրնայ շատ երկարիլ. եւ այն ատեն տեղի
կուտայ չարք մը հիւանդութեանց. ինչպէս .
յօդատուայ (arthritis), տեղափոխական պա-
ւար (abcès métastatique). ծիծերու կարծ-
րացում (induration des mamelles) նիհա-
րութիւն, եղունգներու անկում, վիժում
(զաւակ անցել): Բերնի կեղերուն համար
հետեւեալ դեղն եւս կը յանձնարարէ.

Պաղլեզ (շապ) 25 կում
Քացախ 500 »
Մեղր 250 »

Պաղլեզը հալեցնելու է քացախին մէջ, յե-
տոյ մեղրը խառնելու եւ ասով օրը մէկ քա-
նի անգամներ կառկառաւ ընելու է բերնին
մէջ: Ահաւաստիկ թէ ինչպէս կ'ընեն անա-
սուններուն բերնին մէջ կառկառան, Երկայն
փայտի մը ծայրը կապելու է պզտիկ սպունգ
մը (սիւնկեր) եւ կամ լաթ մը, որ դեղին
մէջ թաթխելով, անասունին բերանը բանա-
լու եւ ամէն կողմը աղէկ մը քսելու է:

Վերի դեղէն զատ կրնաք նաեւ գործա-
ծել, մորմենի աւրմատի խաշածոն, եւ կամ
ընկուզենի տերեւի խաշածոն եւլն: Ծիծե-
րուն համար կրնաք գործածել հետեւեալը:

Գինի 250 կում
Լավանտի ծաղկած հասկ (som-
mités fleuries de lavande) 25 »
Զուր 250 »

Իրար խառնեցէք, եւ ծիծերը լուացէք:

Այս հիւանդութեան մէջ զլխաւորապէս
ուշադրութիւն ընելու է որ եղունգները չ'իյ-
նան, չարունակ լուալ եւ մաքուր պահելու
է ոտքերը, վերը բացատրուած դեղերով:

Եթէ անասունը կը կաղայ, եւ եղունգին
պնդին մէջ ուռչք կայ, պէտք է կտաւատի
հունտով (հեքեն քոխուսի) լարա ղնիլ, եւ
եթէ միեւնոյն տեղը վէրք մը գոյացած եւ
այդ վէրքը ջրոտած է, կրնաք գործածել.

Liqueur de Villate լիգէօն ամ Վիլլատ-
ըսուած դեղը որ կը պատրաստուի հետեւեալ
կերպով.

Sulfate de cuivre (կոզ քաշը) 64 կում
Extraits de saturne (գուրշուն
սիւրխի) 125 »
Sulfate de zinc (սուլֆատ չինկո) 64 »
Vinaigre blanc (ճերմակ ֆագախ) 1 լիթր

Ասանք իրարու հետ խառնելով, անասու-
նին ոտքը լուալու է:

Երբ այս միջոցները չի գործադրէք, կրնայ
ըլնել որ եղունգները իյնան, անոր համար
սկտք է այդ վտանգաւոր սպարագան չի պա-
տահած, աւաջուրնէ գործածել դեղերը:

ՕՐԸ ԵՒ ՄԻՔՐՈՊՈՆԵՐԸ

Օգոն

Օգոնը՝ որուն դիւտը կը վերադրուի 1840
թուականին Շօէնպայն քիմիագէտին, խա-
ցած թթուածինի ձեւ մ'է որ յառաջ կու-
գայ միջնորոտային ելիքորականութեան աղ-
դեցութեան տակ:

Այսպէս Լէվի գիտունը որ Մօնսուռի միթ-
նոլորտին մէջ (Բարիզի մօտ) շատ մը փոր-
ձեր է ըրած՝ գտած է 100 խորանարդ մեթր
օդին մէջ մինչեւ 9 հազարերորդ կում օ-
գոն: Այս քանակութիւնը քիչ մ'աւելի կ'ա-
ծի դաշտերու, անտառներու եւ լեռներու
մէջ, ծովուն վրայ, մայիսի, յունիսի, յու-
լիսի, օգոստոսի եւ սեպտեմբերի գիշերնե-
րը. ընդհանրապէս միւս ամիսներու երե-
կոները օգոնի քանակութիւնը կը նուազի:

Շատ մը քիմիագէտներ եւ ի մասնաւորի
առողջարաններ կը պնդեն որ համաճարակի
ժամանակ նայնպէս մեծ քաղաքներու մէջ օ-
գոնին քանակութիւնը պզտիկ կերպով կը նը-
ւազի: Այս նուազումը կարելի է վերագրել
այն կալին մաքրողական յատկութեան:

Շօէնպայն է դարձեալ առաջին անգամ
կարծիք յայտնողը, թէ օգոնը միջնորոտին
մէջ գտնուող միջրոտներու (miasme) ջնջման
ազդու գործիչ մ'է, այնպէս որ այն կապին
ներկայութիւնը առողջութեան երաշխաւո-
րութիւն մը կրնայ համարուիլ:

Ամուշաղր (ammoniaque). — Միջնոր-
տին մէջ անուշաղրի դայութիւնը առա-
ջին անգամ ծանոյց թէօտոր տը Սօսիւռ այս

գարուն սկիզբները: Թէօտոր տը Սօսիւն լաթ մը ծծմբատի բնապաղէղի (sulfate d'alumine) մէջ թրջելով, օդին մէջ ժամանակ մը թողած էր. երբ սոյն լաթը լուաց պարզ ջուրի մէջ՝ բնապաղէղային ծծմբատին հետ վազեց անուշադր, որ անշուշտ օդէն հաստատուած էր լաթին վրայ:

Անուշադրը օդին մէջ ծնունդ կ'առնու ելեքտրականութեան ազդեցութեան չնորհիւ, եւ կամ անուշադրային գործարանաւոր մարմիններու տարրազդարումէն:

Մեծանուն Փառնասցի գիտուն Շէյգինկ երկար աշխատութիւններէ վերջ՝ առ եզրու կացութեան հասաւ թէ, օդին մէջ զրհթէ միշտ միեւնոյն քանակութեամբ անուշադր կը գտնուի. միջին հաշուով 100 խոր. մեթր օդին մէջ կը գտնուի 2.2 հազ. կոամ անուշադր: Նոյնպէս գիշեր ատեն մթնշաղկաւ տեղի անուշադր կը պարունակէ քան ցերեկը, այս պարագային մէջ կը գտնուին պայծառ օրերը որքան ամպոտ օրերը:

Անճրեւները տեղացած ժամանակ անուշադրի փոքր մաս մը ջուրին մէջ կը լուծուի, եւ հողին մէջ կ'երթայ. որ պիտի ծառայէ իբր անունդ բոյսերուն: Այս մասին ուրիշ առթիւ պիտի խօսինք երկարօրէն:

Բորակամնային քրու (acide azotique). — Օդին մէջ կը գտնուի նաեւ յիտաի քիչ քանակութեամբ, բայց զրհթէ միշտ. որ անուշադրի նման զլուարապէս ծնունդ կ'առնէ օդային ելեքտրականութեան ազդեցութեան տակ: Բորակամնային թթու յառաջ կուգայ նաեւ բորակածին պարունակող գործարանաւոր մարմիններու ազդու կամ զանազաղ օքսիտացումէն, նոյնպէս եւ կը պատրաստուի հողին մէջ գտնուող մասնաւոր խրմորմներու գործունէութեամբ (*):

Մթնոլորտին մէջ վերջապէս կը գտնուին վերը յիշուած մարմիններուն քով քիչ մը օզոնանային ծծմբաւ (sulfate de soude): ւնսիշ (iode), ջրաքնածխային կազեր (ճահճային կազ=gaz des marais C H=), առկօն եւայլն, եւայլն. եւ վերջապէս անկենդան փոշիներ եւ գործարանաւոր մարմիններ: Այժմ խօսինք այս երկուքին վրայ:

(Շարունակելի)

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ

(*) Նոյնիս խմբիներու վրայ յօդուած մը պիտի ներկայացնենք, զոր պատրաստած ենք հետազոտութեամբ Տրդէսէն գիտունին աշխատութեանց:

ՇԵՐԱՄԱՐՈՒԾԻԹԻՒՆԸ

ԲԱՍԹՕՈՒԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ

(Շար. 888 րիւ 13)

Երկու երեք օրը անգամ մը անկողինները փոխեցէք առանց թրթուրները զատելու: Մասնաւորապէս այս շրջանին մէջ անկողնոյ յաճախակի փոփոխումով կրնաք փտախտի կարելոյն խոնաւութիւնը արգիւլելով: Ինչպէս ըսած էինք, մի մոռնաք չերամստան անկիւնները կիրի քլորուկ գնելու:

Մասնաւոր եւ փորձառու մէկը, այս շրջանին մէջ պէտք է զբաղի շարունակ բոլոր հիւանդոտ որդերը վերցնել նետելու. անոնք որ թուլ եւ զանդաղաչարժ են, եւ կամ իրենց մարմնի գոյնը պզտոր կ'երեւի:


Այս շրջանը որ 10—11 օր կը տեւէ, թրթուրներուն վերջին խորխացումը կը կազմէ, եւ կառաջնորդէ զիրենք կերպարանափոխութեան: Զերմաչափը պէտք է նշանակէ այս միջոցին 24° հարիւրարդ ճաշի ատեն, եւ 23° միացեալ ատենները: Այս շրջանին մասնաւոր վերջին օրերը խոնաւութիւնը շատ նաւով, ուշադրութիւն ընելու է որ խոնաւաչափը 90 աստիճանը չ'անցնի, հոգ չէ եթէ վար ըլլայ:

Քստն եւ հինգ կոամ հունտէ յառաջ եւ կած թրթուրները մինչեւ իրենց վերելքը (ասկը) 800էն 830 քիլօի չափ տեւեւ կուտեն մօտաւորապէս. այսինքն՝

1	Շրջանին մէջ, որ կը տեւէ	5—6 օր	5—6 քիլ. տեւել
2.	»	»	5—6 » 25—30 »
3	»	»	7—8 » 75—80 »
4.	»	»	9—10 » 150—155 »
5.	»	»	10—14 » 550—555 »


Թրթուրներուն վերելքին համար նախնական պատրաստութիւններ. — Թրթուրները իրենց վերջին շրջանին մէջ մոտեցնէ 5—6 օր ետքը, կ'սկսին հեռազհետէ վերելքի պատրաստուիլ. այն ատեն՝ անոնցմէ մէկ քանին գլուխին շարժելով, եւ կարեւոր բան մը փնտռելու պէս, սեղաններուն վրայ մէկ կողմէն միւսը կը վազվզեն: Եթէ այդ միջոցին ուշադրութեամբ դիտէք, պիտի տեսնէք որ անոնք չէկ (գումրալ) գոյն մ'ստացեր են, որ յառաջ կուգայ իրենց մարմնին ստացած թափանց-

կուխնէն: Եւ երբ նշմարէք որ, մէկ քանի թրթուրներ արդէն շիկագոյն կերեւին, աճապարելու է խոյն անոնց պատասպարանը պատրաստելու: ասպ թէ ոչ, կառչելու յարմար տեղ մը չի գտնալով, մետաքսաբեր խողովակներուն մէջ լեցուած մետաքսը կը խեղդէ զիրենք: Ուստի՝ այդ պարագային վարուելէք հետեւեալ կերպով:



Պատ. 22 Սեղաններու առջեւի կողմը դօռի դրուած

Որթատունկի բարունակներով (աւանա սալը) երկայն գօտիներ շինեցէք, ինչպէս կընեն խաղողի կողովներու վրան ծածկելու համար, եւ զանոնք հաստատեցէք բուժարանի սեղաններուն առջեւի եզերքները: Որթատունկի բարունակները ուղիղ չ'ըլլալով, իրենց միջտեղուանքը պարապ միջոցներ կը ձգեն: Եւ կը հաստատուին աճապարող թրթուրները, իրենց խողակը ուստայնելու: Խնայողութեան համար, այդ գօտիները փոխանակ առասանով (սիճիւմ) փաթտելու, կրնաք գործածել թթենիի ոստերու կեղեւը, որ բաւական զմացկուն ըլլալով, ձեր գործը կը տեսնէ:




Պատ. 23. Վերելակի պատրաստութիւն

Գօտիները հաստատուելէն օր մը վերջը, հասունցած թրթուրները կը շատնոն, այն պտեն պէտք է կառչելու տեղերը շտոյնել:

Այս գործողութեան համար, ամառի մը չափ առաջ պէտք է կտրել կաղնիի (մեշի), մուշի (genêt գաթր չիչիի կամ գաթր քլուկալը), ցախի (չալը սիւնիսիկե) եւայլն, եւայլն բազմախիտ ոստեր, վեր ի վերոյ 50 հար. մեթր երկայնութեամբ. որոնք մնալով կը չորնան: Այս ոստերով պէտք է սեղաններուն կռնակի կողմը, ուր դօռի դրած չէք, վերելակներ պատրաստել, տեղ տեղ զետեղելով զանոնք, կտրել վարը եւ ճիւղերը վերի սեղանին տակը դարձնելով, այնպէս որ անոնց թեթեւակի կամարի մէջ ձեւը տուած ըլլաք: Առանց այս նախազգուշութեան, թրթուրները վեր կ'ըլլան, երբ ճիւղերուն ծայրը հասնին, վար կ'իյնան: Երբ սեղաններուն կռնակը վերելակներով զարդարիք, այն ատեն պէտք է քովերն ալ նոյն կերպով տեղաւորել վերելակն'ը, ինչպէս եւ մէջ տեղուանքը, միշտ ճիւղերուն ծայրերը դէպ ի ներս դարձնելով, որպէս զի՝ եթէ երբէք թրթուրներէն ոմանք մինչեւ ճիւղերուն ծայրը դալով վար իյնան, իրենց անկումը անկողնին վրայ ըլլայ եւ ոչ թէ գետինը:

Այս երկրորդ վերելքի գործողութենէն 1-2 օր վերջը, մեծ մասամբ թրթուրները կը պատրաստուին ոստերն ի վեր բարձրանալ: Առաջին նշաններուն պէտք է աճապարել վերջնականապէս լրացնելու այս գործողութիւնը ամեն տեղ խիտ առ խիտ ոստեր զետեղելով, եւ կալմել զատ զատ խցիկներ, որոնց միայն առջեւի կողմը բաց մնալու է:



Պատ. 24. Բուժարանները խցիկներու բաժնուած

Երկու քուկէս մեթր երկայնութիւն ունեցող սեղաններուն վրայ 5-6 խցիկ կրնայ շինուիլ: Կաղնիի եւայլն ոստեր գործածած ա-

տեննիւ, պէտք է տեղաւորել տառք գանձը ուժով գետինը վարեն, որպէս զի իրենց վրայ գտնուած սուր եւ ծակող տենքները թափին:

Խցիկները պատրաստելու գործողութեան մէջ նկատողութեան առնելու է որ, օլը պատօրէն չըջան կատարէ անոնց մէջ: Ուստի՝ ջանացէք ըստ կարելոյն խցիկները ընդարձակ ընել, եւ ոչ թէ կարգ մը շերամաբայծերու պատրաստածին պէս իրարու վրայ խճողուած. որոնք ուրիշ նպատակ չ'ունին, բայց եթէ իրենց խցիկներուն մէջ շատ խողակ գտնուիլը ցուցնել, առնաց մտածելու որ այս կերպով շատ խողակ կը կորսնցնեն: Որովհետեւ թրթուրները օդի նուազութենէն նեղուելով կը խեղդուին. եւ կամ բաւական տեղ չի գտնելով, մէկ քանին իրարու քով գալով զոյգ խողակ կը շինեն: Ամեն շերամաբայծ գիտէ որ այս զոյգ խողակները կը մերթուրին մանարաններէն, եւ սրջափ շատ գտնուի, այնչափ վար գին կուտան խողակներուն:

Խցիկներու պատրաստութիւնը ամբողջաւորէն անմիջապէս վերջը, պէտք է թրթուրներուն ճաշ մ'աւելի տալ. որ այս անգամ պէտք է փոխանակ մէջ տեղերը ցրուելու տերեւները, աւելի սեղանին ներքին եզերքները ոստերուն երկայնութեամբ տարածել, որպէս զի թրթուրները ստիպուին դէպ ի վերելակները մօտենալ, եւ դիրութեամբ վեր ելլել:

Պէտք է նաեւ բուծարաններու բոլորտիքը գետնին վրայ, չոր խոտէ կամ չի ջարդուած յարէ (առանց փոշիի) չըջանակ մը կազմել, որպէսզի՝ եթէ պատահմամբ մէկ քանի որդեր վար ինկած ըլլան, իրենց խողակները շինելու համար կառչելու տեղ գտնան:

Ամենէն աւելի այս վերելքին ժամանակ պէտք է զգուշութիւն ընել որ խոնաւաչափը 80 աստիճանը չ'անցնի. ամբողջ մշակութեան մէջ, այս վերջին շրջանին չափ խոնաւութիւն յառաջ չի դուր. որովհետեւ՝ վերելքի ատեն թրթուրները իրենց արտաշնչումն զատ, բաւական քանակութեամբ ջուր դուրս կուտան թէ իրենց կորզանէն եւ թէ կղկզանքին հետ:

Ասոր առաջը առնելու համար, պէտք է զլիւսաւորապէս վերելքէն 4 օր վերջ, խցիկներուն մէջ մնացած աղը վերցնել. մեծ

զգուշութիւն ընելով որ ոստերը չի ջարժին:

Այս միջոցին սակայն պիտի գտնէք անկողիններուն վրայ մնացած քիչ կամ շատ քանակութեամբ թրթուրներ. որոնք յետմնացներ են: Անկողինները չի մաքրած տակաւին, խցիկներու պատրաստութիւնը կրանալն օր մը վերջը երբ կը տեսնէք թէ քանի մը թրթուրներ խցիկներուն մէջ մնալով չեն կրցած վեր ելլել, զգուշութեամբ վերցընելու է գտնոնք, եւ տանիլ առանձին սեղանի մը վրայ դնելու է. իրենց շուրջը ցախաւելով չըջանակ մը կազմելով շարունակելու է ուտելիք տալ: Հետեւեալ օրը երբ տեսնէք թէ անոնցմէ ոմանք ցախաւելներուն վրայ ելած են, եւ միւսները կը մնան իրենց տեղը, այս վերջիններուն վրայ ուրցի (խիփ) կամ ծաթիւնի կակուղ ճիւղեր տարածելու է, որ երբ թրթուրներով ծածկուին, զգուշութեամբ վերցնելով խցիկին վրայ դնելու է: Վերջապէս երբ մեծ մասամբ թրթուրները վեր ելած ըլլալով, տակաւին մէկ քանինք գետինը մնացած ըլլան, տեղերուն վերցնելով, այլուր տանելու եւ կրկին ուտելիք տալով անոնց, վերիններուն պէս բոլորտիքներն ցախաւել շարելու է: Երբ ամեն ալ վեր ելած ըլլան, այն ատեն այդ յետամնացներուն վրայ բարակ լաթ մը ծածկելու է. որովհետեւ ուշադրութիւն՝ եղած է որ, ասոնք մթութեան մէջ աւելի աղէկ իրենց խողակը կը շինեն:

Վեցերորդ օրը. — Մինչեւ ցարդ տեսանք որ շերամը ամեն անգամ նոր շրջանի մը մէջ մտած ատեն մտնելը կը փոխէ (խորխորացում). բայց այս շրջանին մէջ տարբեր կերպով կը ներկայանայ մեզ: Նախ ուտելի կը դադրի, խողակ մը կ'աստայնէ, որու մէջ ամփոփուելով կծիծի կ'ալափոփի, որ կը լրանայ ճիւղերուն վրայ ելլելն հրդ օրը առաւելն, եթէ մշակութիւնը աղէկ կատարուած եւ թրթուրը առողջ վիճակի մէջ է: Բայց որովհետեւ բոլոր թրթուրները միեւնոյն ժամանակին սկսած չեն ճիւղերը բարձրանալ եւ խողակ շինել. այս պատճառաւ խողակները քաղելու համար պէտք է սպասել վերջին թրթուրներու վերելքին, ասկէ 6—7 օր վերջը կարելի է այլ եւս ժողվել խողակները:

Երբեմն կը տեսնուի որ, թրթուրներէն ոմանք ճիւղերը ելլելով, կը թափառին աստ

անդ, վար կ'իյնան, կամ կը մնան ճիւղի մը վրայ. եւ կամ ուրիշներ երբէք վեր չեն ելլար եւ կը մնան անկողնին վրայ, ասոնք առանց խոզակ չինելու կծիծի կ'այլափոխին, եւ յետոյ թիթեռնիկի: Պէտք չէ պահել այդպիսիները. որովհետեւ շատ կարելի է որ, անոնցմէ ելած թիթեռնիկներուն արտադրած հակիթներէն ելած թրթուրները նոյնպէս խոզակ չ'ոստայնեն. թէեւ կարելի է փորձել:

Երբ վստահ էք որ բոլոր թրթուրները իրենց խոզակաշինութիւնը աւարտած են, մէկ քանի խցիկներու մէջէն քանի մը խոզակներ կ'առնէք, եւ ակնհայտ դատեցնելով կը շարժէք, եթէ կծիծը խոզակի կողերուն զարնուելով, կարծր նիթի մը ձայնը տայ, ըսել է թրթուրը իր աշխատութիւնը ամբողջովին աւարտած եւ կծիծի փոխուելու վիճակին մէջ է. եթէ ոմանք այդ ձայնը չի հանեն, ըսել է տակաւին իրենց աշխատութիւնը լրացուցած չեն, եւ հետեւաբար ուրիշ շատեր ալ կը գտնուին այդպէս. այն ատեն որ մ'եւս պէտք է սպասել: Հակառակ պարագային նոյն օրը կրնաք սկսիլ խոզակները քաղելու:

Բուծարաններու վարի յարկերէն սկսելով, խցիկները հետզհետէ կը քակէք, ճիւղերուն վրայէն խոզակները կ'առնէք եւ որոշեալ ամիսներուն՝ այսինքն կողմերու մէջ կը լեցնէք: Բայց այս միջոցին ուշադրութիւն ընելու էք. որովհետեւ միշտ այդ ճիւղերուն վրայ սատկած թրթուրներ կը գտնուին, որոնք արդէն փտութեան աստիճանին հասած ըլլալով, փոքր չարժուումով մը կ'իյնան եւ խոզակները կ'աղտոտին: Ահա այս պատճառաւ է որ կը յանձնարարուի միշտ բուծարաններու վարի յարկէն սկսիլ խցիկները քակելու գործողութիւնը, որպէսզի՝ վերի յարկերուն ճիւղերուն վրայ սատկած թրթուրները վար իյնալով, վարի յարկերու խոզակները չ'աղտոտեն:

Ճիւղերուն վրայէն խոզակները քաղող անձերը ուշադրութիւն ընելու են, զատելու բոլոր աղտոտ եւ տկար խոզակները. որ ուրիշներու ծանրութեան տակ ճղմուելով անոնք ալ չ'աղտոտեն:

Երբ կողմերը լեւան, պէտք է սլարալել զանոնք մաքուր սեղաններու վրայ, եւ տարածել 10—15 հար. մեթր թանձրութեամբ:

Եթէ պիտի ծախէք, կը դնէք այն ատեն

ցորեկուան տաք արեւու ազդեցութեան մէկ երկու օր, եւ կամ փուռի մէջ, հացը եփելէն վերջ. որով կծիծները կը մեռնին եւ հետեւաբար խոզակները չեն կրնար ծախել:

Վերջ Ա. մասին

Ղ. ԲՈԼՍ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

ՄՐԳՕՂԻ

Անցեալները խոստացած էինք առտնին ըմպելիներու պատրաստութեան եղանակներուն վրայ գրել:

Այս ըմպելիները կը պատրաստուին ընդհանրապէս պաղ թրջոցի դրութիւնով. այսինքն, բոյսը կամ պտուղը հեղուկի մը մէջ դնելով (ջուր, ալքոլ եւայլն) ժամանակ մը կը թողուն, որպէսզի՝ անոնց հոտաւէտ գոյւնները, այդ հեղուկին մէջ լուծուին: Այդէկ տեսակ մրգօղիները 85—90 հարիւրադրի աստիճան ալքոլի թրջոցով կը պատրաստուին⁽¹⁾: Ալքոլին ամենէն բարձրագոյն աստիճանը՝ հարիւրադրի ալքոլաշարով 100 է: Երբ 85 աստիճան կ'ըսենք, կը հասկցուի թէ՛ 100 մաս հեղուկին մէջ 85ը զուտ ալքոլ է իսկ մնացածը ջուր⁽²⁾: Գրենք հիմա այլեւս այլ մրգօղիներու պատրաստութեան վրայ:

(¹) Այսինքն Գաւթիյէի 33—37 աստիճան. այս վերջինը ընդհանրապէս Պօլսոյ գինեւ պաններուն գործածած՝ եւ կոլասօ ըսուած ալքոլաշարին է, սուղ գործիք մը չէ. առաւել 8—10 դրուչի կը ծախուի դեղալուծաններու կամ քիմիական գործիքներ ծախողներու քով. քիչ շատ նմանութիւն ունի ջերմաշարի. մէկ կողմը հարիւրադրի աստիճանները կը գտնուի, միւս կողմը Գաւթիյէի: Սմբ.

(²) Զոր օրինակ. սովորաբար մեր գործածած օղիները, վեր ի վերոյ 35—46 հարիւրադրի աստիճան կ'ըլլան, եւ կամ Գաւթիյէի ալքոլաշարի հաշուով 15էն 18 աստիճան, որ ըսել է 100 օխա օղիին մէջ 35—46 օխան զուտ ալքոլ է, իսկ մնացածը ջուր: Գոնեաքները կը սլարուանակն իրենց մէջ 100ին

Բալի (ֆիջնե) մրգողի

— Առէք 1 քիւ ռաւ, կոթերը հանելով լուացէք, կուտերը հանեցէք, եւ սանի (քեննի) մը մէջ դնելով ճղակցէք: Ամբողջովին կուտերը սանդի (հալան) մը մէջ լեցուցէք եւ աղէկ մը ծեծեցէք: յետոյ իրար խառնելով բերանը լայն շիշի մը կամ դղուղի մը մէջ դրէք, եւ լեցուցէք վրան 1 լիթրա 56 աստիճան տաքով (1):

Յետոյ լեցուցէք բալը պարունակող ղղու-

50—55 ալքոլ, եւ աղէկ տեսակ մրգողները կը պարունակեն իրենց մէջ, 100ին 46 50, եւ մինչեւ 55 ալքոլ: Մ. Խմբ.

(1) 85 աստիճան տաքով 56 աստիճանի իջեցնելու համար. առէք 100 կուամ ալքոլ, եւ աւելցուցէք վրան 400 կուամ ջուր, որով կ'ունենաք վեր ի վերոյ 56 աստիճան ալքոլ մը. աւելի աղէկ հասկցնելու համար, տանք նաեւ հետեւեալ բացատրութիւնը:

Ենթադրենք թէ՝ գինետունէ մը կամ դեղաւաճառէ մը ալքոլ առիք, եւ վերը յիշուած ալքոլաշափով կը դտնէք որ 85 աստիճան է: Հիմա կուզէք 56 աստիճանի իջեցնել. ուստի կը կշռէք 650 կուամ ալքոլ եւ 350 կուամ ջուր, եւ իրար կը խառնէք: Աւելի դիւրութեան համար. եթէ ալքոլաշափ մը ծախու առնէք, որ տնտկան ըմպելիներ պատրաստելու համար անհրաժեշտ է, հետը մէկ տեղ առնելու էք նաեւ նեղ եւ երկայն խողովակաձեւ (պոռուի պէս) դաւաթ մը, որ իր երկայնութեան վրայ, հարմեթրի (սանքիւն) հաշով աստիճաններու բաժնուած է, ալքոլը կը լեցնէք մէջը որոշեալ քանակութեամբ, վրան կ'աւելցնէք քիչ մը ջուր, այն ատեն ալքոլաշափը մէջը կ'իջեցնէք, եւ թաղրենք թէ 65 աստիճան կը ցուցնէ, եւ դուք կուզէք 56ի իջեցնել. հանեցէք ալքոլաշափը՝ լեցուցէք վրան քիչ մ'ալ ջուր. մէկ ձեռքով բերանը գոցեցէք եւ միւսով տակէն բռնելով մէկ քանի անգամ ցնցեցէք. եւ նորէն ալքոլաշափը իջեցնելով մէջը՝ չափեցէք, եւ այսպէս մինչեւ որ 56 աստիճանը գտնայ:

Ալքոլը՝ երկայն դաւաթին մէջ լեցուցած ատեննիւ, չափը մոքերնիւ պահեցէք. նոյնպէս վրան աւելցուցած ջուրերնուդ քանակութիւնը, որպէսզի՝ վերջը մնացած ալքոլին վրայ որչափ ջուր լեցնել պէտք է գիտնաք:

Մ. Խմբ.

դին մէջ, եւ բերանը լաւ մը գոցեցէք. որ ալքոլը չի փախի: Այսպէս թողուցէք 15 օր, եւ յետոյ պարզուտէ (սիզիլի) անցնելով, աւելցուցէք վրան 200 կուամ շաքար, եւ երբոր շաքարը հալի կրկին պարզուտէ անցնելով շիշերը քաշեցէք, եւ բերանին աղէկ մը գոցեցէք. իսկ պէտք է որ պարզուտը թեղ-թէ բլայ, դեղաւաճառներուն գործածածին պէս:

Երկրորդ սեսակ

Բալ	310 կուամ
Սեւ կեռաս	125 »
Կարմիր մեխակի ծաղիկին թերթիկները (բոյսին կանանչ տերեւները չի հասկնաք, այլ նոյն իսկ ծաղիկին թերթիկները, առանց հունտերու)	100 »
Ալքոլ 56 աստիճան	1 »

ամբողջ ամիս մը թողուցէք այսպէս. եւ յետոյ պարզուտէ անցուցէք, եւ աւելցուցէք 200 կուամ շաքար, որ պէտք է $\frac{1}{4}$ լիթրա ջուրին մէջ հալեցնել. կրկին թղթէ պարզուտէ անցնելով, շիշերը քաշեցէք եւ բերանին աղէկ մը գոցեցէք:

Երրորդ սեսակ

Բալ	800 կուամ
Սեւ կեռաս	200 »
Արքամար (Ֆուսկուազ, աղամ չիլիէ) (1)	500 »
Ալքոլ 56 աստիճան	1 լիթր.

Նախ ալքոլի մէջ չի դրած, պտուղները չղարշի (թիւրպէն) մէջ դնելով, լաւ մը ճմլեցէք, եւ ջուրը առէք, յետոյ կուտերը կոտորուեցէք, եւ այդ ջուրին մէջը լեցուցէք, այսպէս թողուցէք որ մնայ 2—3 օր:

Հիմա պարզուտէ անցնելով՝ ալքոլին մէջ լեցուցէք, եւ թողուցէք մինչեւ 2 ամիս:

Շիշերը քաշած ատեննիւ պէտք է թղթէ պարզուտէ անցնել:

ԱՐԱՔՍ

(1) Պօլոյ մէջ, սխալմամբ զմաուրա անունը կուտան ֆուսկուազին: Զմաուրան (ֆոսկի իզիւմի) խոշոր տեսակն է, որուն ֆուսկ սերէն փափ կը զուրցնէ:

ԱՌՈՂՋԱՓԱՆԱԿԱՆ

Ականգի մեջ դրուած բանասիր

Խիստ գէշ սովորութիւն մ'է՝ ականջի մէջ շարունակ բանասիր կրել, եւ ալ աւելի գէշ է գոլոների ջուրի (օտը գոլոներ) կամ ալքոլի մէջ թաթխելով գործածելը:

Լսելիաց այնքան նուրբ գործարանակալ-մութիւնը, որ շարունակ կը գրգռին ալքոլի կամ գոլոների ջուրի ազդեցութենէն, եւ շուտով կը մաշին, պաղ օդի դէմ անոր սովորական պաշտպանութիւնը կը տկարացնեն. եւ ամենափոքր օդային հոսանքի մը ազդեցութեան տակ, կամ եթէ անգամ մը բամբակակեր մոռնալով՝ չի զրուի, ջղային անգար (միկոնէն, կէս զլսու ցաւ), ակռայի ցաւ եւ այլն յառաջ կուգան:

Պէտք չէ ուրեմն սովորութիւն ընել ականջներու մէջ բանասիր դնելը: Բայց՝ երբ օդը խիստ ցուրտ է կամ հովութիւն, կրնաք գործածել առանց ալքոլի եւ այս տեսակ դեղերու:

* *

Նիհարեալու համար

Ֆուանսական առողջապահութեան թերթ մը հետեւեալը կ'ըսէ.

Երբեք կարեւորութիւն մի տաք, այն փառանայնորուն որոնք կը խոստանան քանի մը օրուան մէջ ձեզ նիհարեցնել: Շատ անգամներ նիհարեալ ուզողը չի կրնար, եւ վտանգաւոր ալ է, որովհետեւ եթէ գիրութիւնը արտի հիւանդութենէ մը յառաջ եկած է, մէկէն ի մէկ նիհարութենէն ալ մահ յառաջ կուգայ: Կան երիտասարդուհիներ, որոնք չափազանց գիրութենէ մը յառաջ եկած մարմնոյ տճեւութենէն ազատելու համար, առաւօտները բան չի կերած, որոշեալ քանակութեամբ քացախ կը խմեն: Ստուգիւ քացախը քիչ մը կը նիհարցնէ թէեւ, բայց վերջնականապէս ալ ստամոքսի գեղձերը կ'աւերէ: Իսկ եթէ կուզէք ձեր առողջութիւնը անվթար պահելով նիհարեալ հետեւեալ միջոցը գործադրեցէք, որ կը կայանայ մասնաւորապէս չափաւոր եւ չոր սնունդ մ'առնելուն մէջ:

Ահաւասիկ չափահաս մէկու մը համար.

Առաւօտ

Կարմրած (քրքրո) հաց	30 կուտ
Ճարպը առնուած պաղ միս	50 »
Թէյ, խիստ թեթեւ եւ խիստ քիչ չաքարով	250 »

Յորեկ եւ երեկոյ

Կարմրած հաց	50—60 »
Պաղ միս ճարպը առնուած	100 »
Կամ մսին տեղ Ձ թարմ հաւկիթ	
Ապուր	100 »
Բանջարեղէն	100 »
Պանիր	20 »

Պտուղ՝ ըստ հաճոյից:

Այս երեք զլսուոր ճաշերէն առաջ պէտք է հետեւեալ բաղադրութենէն գինիի գաւաթ մ'առնել:

Անգղիական պի ֆառպօնայ քր սուս	30 կուտ
Մանեհգի գալսինէ, (կրացած մանեհգի)	30 »
Ջոնեալ ջուր	2 լիթրա
Լիմօնի արտակեղեւի խաւութիւն	30 կաթիլ
Կրնաք նաեւ հետեւեալ բաղադրութիւնը առնել օրը 2—3 դգալ	
Մանիչ (իօս)	2 կուտ
Իօսիւն քր քօքսսիօս	4 »
Ջուր	22 »

Պէտք է երկար պտոյտներ եւ մարմնամարզ ընել. եւ երբ աղէկ մը յոգնած ըլլաք այն ատեն ճաշեցէք:

ԱՐԱՔՍ

ԿԱՐԵՈՐ ԱԶԴ

Կը խնդրուի մեր Պաւ. Գործակալներէն, որպէս զի բարեհաճին բաժանորդաց ցանկը եւ գանձուած բաժնեգինը ընդ փոյթ ղրկել վարչութեան:

ՎՐԻՊԱԿ

14րդ թւոյն 223րդ Լճին առաջին սիւնակին երկրորդ տողին մէջ կարդացէք այսպէս ըստ ընդ 1/2 հար. մեթրի չափ երկայնութիւն ունին, եւ ամեն տեսակ փայտեղէն, . . . եւ այլն:

ԶՈՒԱՐՃԱԼԻՓ

ՊԱՅՈՒՍԱԿ

ՍՈՎՈՐՈՅԹԻՆ ՏԳԵՂԸ

Հանուր աշխարհացիք, բացի անասուններիցն ու թռչուններիցն, կենաց դառնութենէ կը գանգատին միշտ, նոյն իսկ Սողոմոն՝ այն իմաստուն իմաստակը՝ ինչպէս կ'ըսէ Հիւկօ, աշխարհի և մարդոց կենաց համար «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է» ըսած է, առանց գիտնալու թէ աշխարհի մէջ ոչինչ կամ ընդունայն բան չի կայ. կեանքը դառնացնողն մարդուս իղձն է. ամբողջ բնութեան մէջ՝ որ ամեն ինչ կեանքէ, ո՛րքան վսեմ, ո՛րքան գեղեցիկ է այդ կեանքը, որ կը շողայ կը բուրէ կ'ոգեւորէ. ապա ուրեմն նոյն ընդհանուր կեանքին մէջ գանաւոր մարդոց կեանքը ինչո՞ւ դառն ըլլայ և ամեն բան ընդունայն.

Մեռնիլն, պարզապէս նորէն սկսիլ մըն է անցնիլ այն անծայր շղթային օղակներուն, որ մշտնջենական շարժման անխմանալի անխը կը դարձնէ. միթէ բնութիւնը բանի տե՞ղ կը դնէ քու հիւանդնալդ կամ չքաւոր ըլլալդ և կամ կնկանդ հետ դժտիլդ. բնութեան անխը միշտ կը դառնայ, արարածք պարտին հետեւիլ այս թաւալման, ահա այս անհուն մեքենային ամենափոքր մասնիկներն ենք մենք, որ անընդհատ գործելով, անգործածելիներու տեղ նորերը կը յաջորդեն և ահա այս փոփոխման, մենք մահ անունը տուած ենք զոր ահ և սորսափ կաղզէ ամենէն քաջարի սրբտերու, և, որմէ որ աստիճան չնչին էակներ ըլլալնիս բացայայտ կ'երևի.

որ մը լսած էք մեքենայէ մը հանուած անգործածելի խողովակի մը կամ կոտրած գլանի մը գանգատիլը իրենց տեղ նոր մը գրուած ըլլալուն համար, յայտնի է թէ՛ եթէ ատոնք չհանէին, մեքենան չպիտի բանէր. իսկ մենք բանականքս չենք գիտեր այս բնական օրէնքը և կամ չգիտնալ ձեւացնելով և կեանքը դառն է ըսելով կը գանգատինք և մեզնէ մէկը եթէ մեռնելու ըլլայ, այսինքն անգործածելի դառնայ, ողբուկոծելով աշխարհ տակն ու վրայ ընել կսկսինք.

Մեռնողի մը համար ցաւ զգալ. ասի կը հասկնանք, բայց «վախ օրտախ» պօռալով գլխու մազերը փեթռտեն թէ ծիծաղելի, և թէ այպանելի է.

Չափահասի մը արտասուելն մեղ այն աստիճան տգեղ կ'երևի, որ սովորած ենք այդպիսեաց ըսել թէ «լալկան կրնկան պէս ինչ կեցեր կուլաս» մինչդեռ մեր ցաւոց ատեն եթէ անտարբեր մէկը տեսնենք, տմարդի և անքաղաքավար կը համարենք զայն. կ'ուզենք որ ամեն մարդ մեղ հետ ցաւ զգայ, ողբայ ու ու արտասուէ.

Թէպէտեւ առձեռն պատրաստի միքանի խօսքեր ունինք. օրինակի համար, մեռնողին հետ չմեռնուիլ. ամէնքս ալ այս ճամբէն պիտի անցնինք, վաղը ողջ երնելիքը ո՞վ կրնայ գիտնալ և ըն. բայց, լացն ու պոռչտուքն ալ մահ պատահած տան՝ կարծես չէնքն ու չնորհքն է.

Անցեալներն Գում-գաբու յուղարկաւորութեան մը ներկայ գտնուեցանք որուն մէկ նկարագիրն ընելէ չի կրցինք ետ կենալ, ցոյց տալու համար թէ որ աստիճան անվայել ընթացքի մէջ կը գտնուին շատեր, սուգ և լռին տխրութիւն պէտք եղած մէկ ժամուն.

Ատենէ մը ի վեր, սովորութիւն եղած է՝ ինչպէս յայտնի է, ննջեցեալի մը մար-

մինը առջի օր կամ գիշերունէ չէնք չնորհք եկեղեցի կը փոխադրեն. ուր յուզարկաւորութեան արարողութիւնք կատարուելէ յետոյ, թափօրը քիչ մը տեղ կ'ընկերակցի դադաղին ուրկէ դադաղակիրք կ'առնեն կը տանին և ամեն մարդ կը ցրուի. բայց զժառղգաբար գեռ բազմութիւ են այն ընտանիքներ որոնք հնաւանդ յոռեպաշտութիւններն չեն ուղեր թողուլ. ասոնք ննջեցեալին սարօք ու կարգաւորով եկեղեցի կը տանին, ուր եկեղեցական արարողութիւններն կատարուելէ յետոյ, պէտք է որ թափօրը դարձեալ տանը առջեւէն անցնի սրպէս զի ընդհատեալ ողբուկածերն դարձեալ սկսին. Ահա այս կարգի յուղարկաւորութեան մը գտնուելու ստիպուեցանք մենք ա :

Հազիւ թէ դադաղը դռնէն դուրս ելած էր, տանը պատուհանները բացուելով լացն ու կոծն սկսաւ. մէն մի պատուհանէ հինգ վեց կանացի գլուխներ իրարու վրայ խոնած էին և սոթառուած մերկ բազուկներ օդին մէջ կը տատանէին, մերթ ընդ մերթ ուժգնապէս ծեծելով պատուհաններու առջեւի տախտակամածը, և ամեն բերնէ տարբեր պողպատներ օդը կը թնդացնէին :

— Գա ո՛ւր կը տանիք կո՛ր... (Իբր թէ երթալիք տեղը նոր պիտի սորվէր) ախ հաճի աղան... ինծի ասանկ որո՞ւ թողուցիր կերթա՞ն կո՛ր... գա խուշերու պէս ընտո՛ր հոգի տուիր տէ, խունկերու պէս ատանկ կը քնանաս կո՛ր... :

— Վա՛խ ես վրում վա՛խ... մամըդ ձգեր ուր կերթաս կո՛ր... չարթէ չաբաթ քսան տիրէմ Բարոթա կը պերէիր դա ես հիմայ էնֆիլէսիզ ընտո՛ր պիտի ընե՛մ... :

— Վախ օրդտի՛... գա վա՛խ Սինէմ ճանըս, սօն սօնու ատ տէրտը կլոխդ կերաւ հա՛. քէչկէ ես քու տեղդ սեւ հո-

ղերուն տակը երթա՛յի՛... :

Բարեկամիս հետ պարսաւորեցանք տուն մտնել, այս վայնասունը փոքր ինչ լռեցնել տալու համար :

— Կ'օգտէ մարիկ, կրնա՞ս հոգի տալով ողջնցունել :

— Մըտեր ես վրում մըսեր, սիրտիկըս կերի կո՛ր... իմի՞ն տունիկըս քրորեցաւ տո՛ւն ինչ կ'ըսես կո՛ր... :

— Ինչ ընենք բան մընէր եղաւ, աստուած մնացածներն ողջ պահէ, լալով ձեռքերնիս ի՞նչ կ'անցնի :

— Գա ճանըմ թող տուէք կէնճը լա՛յ որ սիրտը պայտի ֆէրահնա. տասնը հինգ տարուան տէրը ութը օրուան մէջ հողին տալը խօլայ պան է. լայ գայ, լաց օր պացուիս... :

— Գա օր մը Մայրենէն հոս էր, հոճի աղա աս տարի գեղ չպիտի՞ ելլաւ ըսաւ նէ, կեցիր նայինք ախճիկ, ասանկ երթայ նէ աս տարի տունին վերի խաթը պիտի ելլամ ըսաւ... Էրկու աչիս քէօրնայ, ընտոր հավէսը փորիկը մնաց աէ, վարի խաթը մեռաւ... :

Ասոնք մտիթարեւն անկարելի ըլլալուն համաղուելով, բարեկամիս հետ եկեղեցի վերադարձանք, ուր վերջին արարողութիւններն կատարուելով, ննջեցելոյն մարմինն գերեզման փոխադրուեցաւ :

Այժմ այս եպերելի սովորութիւնը թէեւ տակաւ վերնալու կը միտի վերին և միջին դասու մէջ, բայց ժողովրդեան ստորին դասը դեռ ջերմեանդաբար յարած է յունաց այս հին սովորութեան, որ պարզապէս ցոյց և կեղծիքէ միայն. զի տաան օր վերջը մեռնողին ունեցածը մէջընդմիջ բաժնելու ատեն իրարու գլուխ կը պատուեն. մինչդեռ առջի օրերը զուսահոգիին հագածն է աչիս չաւսնայր կ'ըսէին : Թէպէտ սովորութիւն եղած բան մը մինչեւ մէկ աստիճան մենք ալ կը յարգենք, բայց ննջեցեալներու վրայ

պատուհաններէ փեթուտուիլ և պող-
չտալու սովորութիւնը, սովորոյթներու ա-
մենազգուշիւն և ամենատգեղն է. ուստի
փափաքելի է որ համեստուհի քոյրեր-
նիս ետ կենան այս տեսակ անպատուա-
բեր ցուցամոլութիւններէ :

ԿՏԱԿ

Այս բառը ժամանակէ մը ի վեր նշա-
նակութիւնը կորուսած ըլլալով, ատոր
արմատն հետազօտել և բուն նշանակու-
թիւնը հասկնալու համար, լուսահոգի
Հին. քերականէն տիեան Հօր Ստուգաբա-
նական՝ երանելի բառարանին դիմեցինք
և գտանք թէ «կտակ»-ին արմատը «կու-
տակ» է եղեր. Այդ խորհելով որ եթէ այդ
կուտակին ձեռք դպցնելու ըլլանք, գէշը
պիտի աւրուի սկսանք արմատին արմատը
փնտռել և տեսանք որ Ստուգաբանը՝
ընթերցողներն անստուգութենէ ազա-
տելու համար, յիշեալ բարդը կիսէր
«կուտ-ակ» ըրած էր, որ ստակի աղ-
բիւր կը նշանակէ :

Ահաւասիկ մեր փնտռածն ըսինք մեծ
ուրախութեամբ ու ծորակը դարձուցինք
տոչորիչ պապականիս մի քիչ պաղչկեցնե-
լու համար :

Բայց ափոփ... դարձեալ յուսախար
մնացինք. ջուր չի կար, չորցեր էք, ինչ-
պէս կ'ըսեն սովորաբար :

Վերջապէս եղբակացութեան մը յան-
դելու համար, դիմեցինք մեր Պայուսա-
կին ստուգաբանական բառարանին, և
ինչ գտնանք աղէկ, «կտակ»-ը «կատակ»
է եղեր :

Այս առթիւ, բերկրութեամբ կ'իմա-
նանք վախճանեալ Գարակէօզեան Վսեմ.
Տիգրան էֆ. ի կտակին խնդիրը, երեկի
Քաղ. Ժողովոյ նստին մէջ երկկողմանի
համաձայնութիւն գոյանալով, վերջնա-
կան լուծումն ստացեր է :

ՁՈՒԱՐԹՈՒՆՔ

Բերայի բարձրաստիճան դասէն պա-
րոն մը, իր տիկնոջ հետ այցի պիտի ել-
նէր բարեկամներու եւ որովհետեւ ժա-
մանակ չկորսնցնելու համար, փոխանակ
այցելութեան՝ դադած տեղը այցաբարդ-
մը թողուլ կը բաւէ ըստ եւրոպական
դրութեան, կառքը մօտելու ատեն միտ-
քը կուգայ որ այցաբարդերը առնել
մուցեր է, կառավարին քովը նստող ըս-
պասաւորին կ'ըսէ :

— Ասատուր. քարդերս վերը միջնասե-
ղանին վրայ մուցեր եմ, դնայ առ վրադ
թող կենայ, որ երթալիք տեղերնիս մէկ
մէկ հատ ձգես :

Սպասաւորը այս հրամանը ճշդիւ կա-
տարելով, կառավարին քովը իր տեղը
կելլայ կը նստի և ամէն հանդիպած
տուններին կանոնաւորապէս մէկ մէկ
հատ կը ձգէ :

Ութ տասը տուններ այսպէս շարունա-
կելէ վերջը, մեծատունը սպասաւորին
կը հարցնէ :

— Ասատուր. որչա՞փ քարդ մնաց վը-
րադ :

— Տէր իմ, կը պատասխանէ սպասա-
ւորը. Մաշային թահլըն, Օրեային տաս-
նոցը և Սպաթիլին մէկնոցը մնաց :

Խեղճ տղան, այցաբարդերուն տեղ,
խաղի քարդերը առած էր սեղանին վը-
րայէն :

* * *

Երկու շուկայի խանութպաններ, գի-
նետան մը մէջ իրար հանդիպելով, ե-
րէցն կրտսերագոյնին ըսաւ :

— Ախպար, ամեն տտեն կը տրանջաս
որ առեւտուր չի կայ, իրիկունները մին-
չեւ ժամը երկուք կը նստիս օդի կը խը-
մես, փսւճ ստակ ծախսելու ի՞նչ հարկ
կայ. նայէ ես, այն օրը որ առեւտուր
չընեմ, ոտքի վրայ հատ մը կը խմեմ,
կ'առնեմ կը քալեմ :

— Առ քեզի տղայական խօսքեր, իմ
առեւտուր չըրած օրս ի՞նչ իրաւունքով
գինեպանն ալ մնասուի. ես մարդու զէն
ընելը չեմ սւղեր ախպար կէլ շու չիշէի
տօլտուր :

Մի քանի բարեկամներ, գաղինո մը նստած, բժշկութեան դեռ օրօրանի մէջ գտնուելուն վրայ կը բանադատէին:

Բազմանդամ ընտանեաց տէր պատուաւոր պարոն մը որ մօրիկ կընէր, խօսքի միջամտելով ըսաւ:

— Ամեն բժիշկներն մէկ ջուրով լուարը արդարութիւն չէ. բժիշկ կայ որ իրաւի ոտք կօխած տունը կը քանդէ, բայց բժիշկ ալ կայ որ մտած տանը մէջ բարիք կը սփռէ:

— Մենք ատանկ բժիշկ ոչ տեսած, եւ ոչ ալ լսած ենք ըսին:

— Ահաւասիկ մեր տան բժիշկը, ուրուն մէկ արարքը պատմեմ եւ դուք ինքնին դատեցեք, անցեալ օր, կնոջ ըսեր է որ ելակին վրայի աւազներն, շաքարախտ յառաջ կը բերէն, անկէ ի վեր է տան մէջ ամենեւին ելակ չեն ուտեր կոր:

— Շիտակը ի՞նչ մեծ բարիք:

— Ինծի համար, ասկէ աւելի մեծ բարիք չէր կրնար ըլլալ, որովհետեւ օրը առնուազն կողով մը ելակ չէր բաւէր մեզի, հիմայ, իրիկունէ իրիկուն, տասը վաճառքով գործս կը տեսնամ կոր:

Խելանի Մատաթը՝ որ ծաղիկի հիւանդութեան համար պատուաւորութեամբ ամենեւին կարեւորութիւն չէր տար, դէմը ելնողին կ'ըսէր:

— Կը զարմանամ թէ ինչ բանի օգուտունի սա պատուաստը, տղայ մը կը ճանչնայի կայտառ եւ ուժեղ, ընտանիքը զայն պատուաստել տուին. էյ լաւ, կ'ուզէք որ երկու օր ետքը մեռնի խեղճ տղան...:

— Ի՞նչ կ'ըսեք, երկու օր ետքը մեռաւ...:

— Այո, բարձր ծառէ մը իյնալով անմիջապէս հոգին աւանդեց. այժմ պատուաստեցէք եթէ կ'ուզէք ձեր տղաքը:

Ոոկերիչ պարոնին մէկը ցուցամատը ցաւցնելով, ուղղակի վէզիւր խան Բեկարոյթի մը կը դիմէ, որն որ քննելէ յետոյ, բան մը չէ կ'ըսէ տեղ մը զարնելով ջիղը վնասուեր է, բայց պատատելէ՞ վերջը, տասն օրի չափ գործածելու չես այս մատդ:

— Այդ ըսածդ անկարելի է:

— Ինչու համար անկարելի:

— Որովհետեւ մեր գործերը բոլորովին «Մատս մէջ նէյով» կը դառնայ, տասը օր անգործ չեմ կրնար մնալ:

* *

Երեւելի խման մը ծանրապէս հիւանդանալով, վերջին ժամուն քովը դանուող բարեկամներէն միոյն աղաչեց որ իրեն դաւաթ մը ջուր տայ:

— Միթէ ջնջում ունիս:

— Ոչ ըսաւ, հագիւ լսելի ձայնով մը, մարդս մեռնելէ առաջ պէտք է որ իր թշնամոյն հետ հաշտուի:

* *

Ռօսինի, բարեկամներէն միոյն հետ գլուս բռնած էր, որ վաստկողն սուսկով տապկուած հնդկահաւ մը պիտի չահէր:

Ռօսինի գրաւը շահեցաւ, և տեսնելով որ միւսը հնդկահաւին խօսքն անգամ չընէր, օր մը այդ բարեկամին ըսաւ:

— Ինձ նայէ սիրելիդ. իմ, սա մեր հնդկահաւն ո՞ր ժամանակ պիտի ուտենք:

— Միտքս է, բայց կ'ըսեն թէ աղէկ տեսակ սուսկ դեռ չի գտնուիր:

— Օն ա՞նդր ըսաւ, մեծ երգահանը. հնդկահաւերն են բոլոր այդ սուտ տարածայնութիւնները տարածողներն:

Յ. Մ. ՀԱՃԵԱՆ

ՆԱՄԱԿԱԴՐՕՇՄՆԵՐ (ՓՈՒԼ)

Եթէ կուզէք բացէն շահ մը, չի յուսա-
ցուած բանէ մը կոկիկ դրամ մը վաստը-
կիւ, պրպտեցէ՛ք փոշիի ներքեւ մնացած
անտուկները փնտռեցէ՛ք, նամակներ, ո-
րոնց վրայ այլեւայլ գոյներով նամակա-
դրօշմներ սխալի գտնաք: Ահա ատոնք են
ձեզ բացէն դրամ բերողը:

Այն ատեն եթէ դիւրութիւն ունիք
զանոք զրկեցէ՛ք թերթիս խմբագրատունը,
ուր ձեզ կը վճարուի կամ կը զրկուի նո-
ցա արժած գինը, եւ կամ խմացուցէ՛ք
ձեզ, եւ ձեզ դիւրին միջոցներ կը ցուց-
նենք ձեզ հասցնելու համար:

Մանրամասն տեղեկութիւններ փութով
կը արուին փափաքողաց:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՅ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՄԱՆՆԱՆ ԵՒ Ս. ԿՄԻՐՁԷ

Կ. Պոլիս Գնտքեան խանի տակ քիւ 3

Վաճառատունս պատրաստ է մատակա-
րարել մեծ ու փոքր քանակութեամբ ա-
մէն տեսակ թարմ դեղորայք. վիրաբու-
ժական գործիքներ Անգղիական եւ Գաղղ.
պատրաստ դեղեր, գօնեաքներ, գինիներ
եւ հանքային ջուրերու մեծ մթերք մը,
յարմար գներով, Լ. Արսլանեան եւ Ս.
Էմիրդէ Ընկերութիւնը երկար ատե-
նէ անձնական փորձառութիւններ ունին:
ամէն ջանք եւ աշխատութիւն չեն խնա-
յեր իրենց յաճախորդներն գոհացնելու
համար, մասնաւոր ուշադրութիւն կը հը-
րաւիրեմք գաւառաց համար, որոնց կը
զրկենք դեղորայք ամենայն արագու-
թեամբ, թարմ եւ մատչելի գներով:

Զարաճճի մլուկներու եւ լուերու եւլն.
համար միջատասպան փոշի Poudre insec-
ticide մեծաքանակ բերել տուած ենք ուղ-
ղակի Տալմացիաէն, որուն համար մաս-
նաւոր ուշադրութիւնը կը հրաւիրեմք յար-
գայ հասարակութեան:

ՆԱՅԵՑՑԷՔ ՓՆՏՈՒՅՑԷՔ

Ձեր տունի եւ խանութի անկիւնները,
եթէ հին գրքեր եւ բուլբուլ ունիք՝ բերէք

Զարգարեան Գրատունը, ուր տեղ չառ լաւ
գիներով կը գնուին, աղէկ փնտռեցէ՛ք,
եթէ կ'ուզէք ծախել փոշիի տակ մնացած
գրքեր ու բուլբուլ:

Ջերմապէս կը յանձնարարենք մեր ըն-
թերցողներուն Տր. Տիգրան փաշա Փեշ-
տիմալճեանի

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԱՅԻՆ ՊԱՏՈՒԱ յՏԻՆ
անուն երկը՝ որուն գինը 40 զրուշէն զեղ-
չած եմք 10 զրուշի անհաւատալի գնոյն,
սոյն հեղինակութիւն մանրամասն պատ-
մութիւնը կ'ընէ պատուաւորի գիւտին և
զարգարուած է լուսանկար պատկերնե-
րով:

Բարեյիշատակ Տօքթօրին ՄԱՆԿԱՏԱ-
ԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ 2 հատոր 5 զրուշ: Գաւառ-
ներէն խմբագրատունս 18 զրուշի թղթա-
դրոշմ զրկողին երկուքն ալ կը զրկուի:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՄԱՐՏ ԱՄՍՈՅ

Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ. — Աշխարհաբար
գործնական Բերականութիւն եւ շարա-
դրութեան տարերք—չըջան Ա. — տպգր.
Բ. (տպ. Մատթէոսեան 8^ր էջ Ա—Է. 120.
— կգր. գին 2 զրշ. կեդրոն. Պալենց
գրատուն.

ՄԱՆՔԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Գրեց ՏՐ. Ն. ՏԱՂԱՎԱՐԵԱՆ

Սոյն երկասիրութիւն կը խօսի մանրէնե-
րու վրայ, և կ'արժէ որ ամեն անհատ մէկ
հատ մը ունենայ իր թանգարանին մէջ:

Գինը 10 զրուշ

Կը ծախուի թերթիս խմբագրատունը
և ամեն Գրաւաճառաց քով:

Հրատարակուած է նաեւ Մեծարոյ Տօք-
թէօրին Ֆրանսերէն մէկ նոր հեղինակու-
թիւնը «Տիեզերք և իր կազմակերպու-
թիւնը» խիստ շահեկան և չառ գնահա-
տելի աշխատութիւն մը:

Գինը 10 զրուշ: Կեդրոնատեղի Գրա-
տուն Վայս, Բերա Մեծ փողոց:

Հանրապետական կը հրատարակուի ամէն Շաբաթ օր կանոնաւորապէս.
կը պարունակէ Դրական, Գիտական, Երկրագործական, Տնտեսական,
Արհեստական եւայլն, եւայլն. շահեկան նիւթեր.
Երկրագործական, Արհեստական ու Իրաւաբանական հարցումներու միշտ
պատասխանները կը տրուին մասնագէտներու ձեռքով.
Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ Տնօրինութիւն Հանրապետական լրագրի.

4. Պոլիս, Զարդաբեան Գրատուն, Զագմագմըլար-եօգուշու. քիւ. 50
در علیاده چقماچیلرده ۵۰ نومرولی زارطاریان کتبخانهسندہ (خارا قیداق) مجموعہ علوم غزہ سی

Հանրապետական պատրաստ է ընդունիլ ամէն տեսակ ծանուցումներ, աղբարարութիւններ, խիստ դիւրամատչելի պայմաններով. Հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն ղրկել երկու օրինակ, զորս պիտի ազդարարենք հասարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը.

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱԳԻՏՍԿԻ

ԱՅՆԹԱՊ. — Գարեգին էֆ. Պօղարեան	ԿԵՍԱՐԻԱՅ — Գեր. Տրդատ Ծ. Վ. Պալեան
ԱՏԱ-ԲԱԶԱՐ — Ստեփան էֆ. Սափրիչեան	ՄԱՐԱՇ — Արժ. Տ. Յովհաննէս քհնյ.
ԱՏԱՆԱ. — Միսաք էֆ. Գողազեան:	Վարժապետեան.
ԱՐԱԲԿԻՐ — Յ. Պ. էֆ. Սանուկեան.	ՄԱՐԶՈՒԱՆ — Յովհաննէս էֆ. Յակոբեան.
ԱԹԵՆՔ. — Մկրտիչ էֆ. Սանուկեան	ՄՈՒՇ — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան.
ԳՈՒՐՏ ՊԵԼԷՆ — Արժ. Տ. Ստեփան քա-	ՆԻԿՈՍԻԴԻԱ — Յակոբ էֆ. Սուքիասեան.
հանայ Մկրեան.	ՈՒՐՅԱ — Գէորգ էֆ. Ոսկերիչեան.
ԳԱՀԻՐԷ. — Մ. Պաղտասար էֆ. Ս. Նո-	ՊԱՆՏՔՐՄԱ — Արմենակ էֆ. Ս. Մաքրեան.
թանեան.	ՊԱՐՏԻՋԱԿ — Վահան էֆ. Ճիկունի
ԷՐԶՐՈՒՄ — Տեարք Ինճիճեան Եղբարք.	ՊՐՈՒՍԱ — Օննիկ էֆ. Լուծֆեան.
ԹԷԼՐԱՆ. — Կարապետ էֆ. Բաբարեան.	ՌՈՏՈՍԹ — Յովհաննէս էֆ. Տէմիրեան.
ԹՕԳԱՏ — Յովհաննէս էֆ. Գաղանճեան.	ՍԱՄՍՕՆ — Կարապետ էֆ. Սէֆերեան.
ԻԶՄԻՐ — Կարապետ էֆ. Մալէճանեան.	ՍԸՎԱԶ — Յ. էֆ. Գարակէօզեան.
ՄԱԼԿԱՐԱ — Վ. Սանուկ էֆ. Զօլաքեան.	ՏՐԱՊԶՈՆ — Սահակ էֆ. Էթմէքճեան.
ԽԱՐԲԵՐԴ. — Խաչիկ էֆ. Քէօնէեան.	

ԳՐԱՏՈՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Դիրք գնել կ'ուզէ՞ք, դիմեցէ՞ք Զարդաբեան Գրատունը. հոն միշտ պիտի գտնէք ամեն ուղածնիդ եւ միշտ զեղչով.

Հանրապետական ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

- Սամաթիա Կոյսարանը թիւթիւնճիւ Արթին աղաի խանութը:
- Մաքրի-գիւղ, Պ. Պօղոս Աղնաւորեանի խանութը:
- Սկիւտար, Պ. Բիշթօֆճեանի խանութը:
- Բերա, Մեծ փողոց Պ. Գառնիկ Կիւլերեանի խանութը: